

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

# ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան  
Քոփի Փրինթ  
2020

ՀՏԴ 351.74(07)  
ԳՄԴ 67.401.213g7  
Ս 757

Ս 757 Սովորողի ուղեցույց/ ՀՀ ոստիկանության կրթահամալիր.- Եր.:  
Քոփի Փրինթ, 2019.- 58 էջ + 1 էջ ներդիր:

Ուղեցույցը նախատեսված է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի դիմորդների, սովորողների, ինչպես նաև հասարակության տարբեր ոլորտների ներկայացուցիչների համար: Ուղեցույցում ներկայացված են ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնադրույթները և սովորողների գիտելիքների գնահատման սկզբունքները:

Ուղեցույցը կարող է օգտակար լինել կրթական գործընթացով հետաքրքրվող անձանց և մարմիններին:

ՀՏԴ 351.74(07)  
ԳՄԴ 67.401.213g7

ISBN 978-9939-875-39-2

© Քոփի Փրինթ, 2020

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ .....	4
ՄԵՐ ՄԱՍԻՆ .....	5
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ .....	7
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ .....	7
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ .....	8
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ .....	12
ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ .....	12
ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ .....	14
ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ .....	16
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ .....	20
ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....	22
ԳՆԱՀԱՏՈՒՄ .....	23
ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ .....	25
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ .....	26
ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐ .....	27
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՌՕՐՅԱՆ .....	28
ԳՐԱԴԱՐԱՆ .....	30
ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ .....	30
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԶԱՏՈՒՄԸ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ .....	36
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ .....	40
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	45
ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ, ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ .....	47
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ .....	48
ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ .....	51
ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ .....	52
ՑԻՏՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ԳՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆԸ .....	55
«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՈՎՈՐՈՂ» ՄՐՑՈՒՅԹԸ .....	56

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ



Սիրելի՛ ուսանողներ,

Յուրաքանչյուրիդ ապագայի որոշակիացման հարցում էական դերակատարություն ունի մասնագիտության և բուհի ընտրությունը: Ճիշտ կատարված ընտրությունն ապագա մասնագիտական և սոցիալական կայունության կարևոր երաշխիք է: Կարծում եմ՝ բուհի հարցում ձեր ընտրությունը պետք է կանգ առնի այնպիսի ուսումնական հաստատության վրա, որի գլխավոր նպատակը սովորողին տեսական և պրակտիկ հարուստ գիտելիքներով առաջնակարգ մասնագետ պատրաստելն է:

Այս իմաստով ՀՀ ոստիկանության կրթահամալիրը շահեկան վիճակում է: Կրթահամալիրում վեր-

ջին տարիներին իրականացվում են հսկայածավալ բարեփոխումներ, որոնք վերաբերում են կրթության կազմակերպման և հետազոտությունների զարգացման բոլոր ուղղություններին: Բուհում իրականացվում են գիտական, հետազոտական, կրթական, միջազգային բազմաբնույթ ծրագրեր, շարունակաբար բարելավվում են տեխնիկական և շենքային պայմանները՝ ուսումնական և գիտական գործունեությամբ զբաղվելու միջավայրն առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Կրթահամալիրի կարևորագույն ձեռքբերումներից է իրավաբանական կլինիկայի հիմնադրումը, որտեղ սովորողներն իրենց գիտելիքներն ու կարողությունները կարող են գործադրել պրակտիկ գործունեության տեսանկյունից: Կրթական գործընթացի բարեփոխումները, գրադարանային ֆոնդի թարմացումը, սոցիալական ծրագրի ներդրումը, սովորողներին հանրակացարանով ապահովելը և Կրթահամալիրի կողմից մեկ տասնյակից անցնող ծրագրերի իրականացումը միտված են որակյալ կրթություն տրամադրելուն և դրա համար բարենպաստ միջավայրի ստեղծման նպատակի կայացմանը:

ՀՀ ոստիկանության բարեփոխումների համատեքստում կրթահամալիրում մեկնարկել են նոր ձևավորվող պարեկային ծառայության պաշտոնների նշանակման համար ուսուցման կազմակերպման աշխատանքները: Այն լինելու է ժամանակակից ոստիկանության առաջին փուլը՝ նոր կրթությամբ ու հմտություններով, նոր վարվելակերպով, սարքավորումներով ու միջոցներով հագեցած:

Ուղեցույցում ներառված են Կրթահամալիրում կրթական գործընթացը կանոնակարգող և սովորողների իրավական կարգավիճակը որոշակիացնող հիմնական իրավական ակտերը, որոնք Կրթահամալիրի առաքելության և նպատակների մասին հստակ պատկերացում կազմելու հնարավորություն կընձեռեն:

Հուսով եմք՝ ուղեցույցը կպատասխանի Ձեզ հետաքրքրող բոլոր հարցերին:

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,  
ոստիկանության գեներալ-մայոր  
Մուշեղ Բաբայան*

## ՄԵՐ ՄԱՍԻՆ

Կրթահամալիրը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող պետական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է *բարձրագույն* (իրավաբանական կրթությամբ (բակալավր և մագիստրոս) և *հեղբուհական մասնագիտական* (իրավաբանական ուղղությամբ գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, ոստիկանության գործունեության հետ կապված հիմնախնդիրների գիտական մշակումը, իրավագիտության բնագավառում հետազոտությունների իրականացումը), ինչպես նաև՝ *նախնական, միջին մասնագիտական* (ոստիկանական կրթությամբ մասնագետների պատրաստումը) և *լրացուցիչ կրթական ծրագրեր*: Նշված կրթական ծրագրերով Կրթահամալիրի առաքելությունն է կրթության զարգացման ոլորտում պետական և հանրային անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ռազմավարական ծրագրերի շրջանակներում գիտելիքների ստեղծումը, փոխանցումը և տարածումը: Շուրջ 100 տարի կրթահամալիրը պատվով ու պատասխանատվությամբ է կատարում իր առաքելությունը: Դեռևս 20-ական թվականներին Խորհրդային Հանրապետությունում գործում էին կարճաժամկետ կուրսեր միլիցիոներներ պատրաստելու համար, որի նպատակն էր անգրագիտության վերացումը միլիցիայի շարքերում: Խորհրդային Միությունում, քաղաքական փոփոխություններով պայմանավորված, փոփոխվել են Խորհրդային Հայաստանի համար կադրեր պատրաստող ուսումնական հաստատությունների կարգավիճակները: Կրթահամալիրը բարձրագույն դպրոցի կարգավիճակով սկսել է գործել 1991-1995 թթ.՝ որպես **ՀՀ ՆԳՆ միլիցիայի բարձրագույն դպրոց**: Մինչև 2011 թ. դպրոցի իրավական կարգավիճակը մի քանի անգամ փոփոխվում է: **ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 615-Ն** որոշմամբ արդեն գործող «ՀՀ ոստիկանության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպվում է «**ՀՀ ոստիկանության կրթահամալիր**» պետական ոչ առևտրային կազմակերպության:

**1966 թվականին բացվում** է ՍՍՀՄ ՆԳՆ միլիցիայի Երևանի **հատուկ դպրոցը**: Ուսման տևողությունը երկու տարի էր: Դպրոցն ուներ նաև **հեռակա բաժին**:

**1966 թվականին** ստեղծվում է ընդհանուր և հատուկ մասերից **բաղկացած գրադարանը**:

**1967 թվականին հատուկ դպրոցը** տալիս է հեռակա ուսուցման բաժնի առաջին 18 շրջանավարտները:

**1977 թվականին** բացվում է ՀՍՍՀ ՆԳՄ մարտական և աշխատանքային փառքի թանգարանը, որը **2013 թվականին** վերանվանվում է ՀՀ ոստիկանության պատմության թանգարան և տեղափոխվում ՀՀ ոստիկանության կրթահամալիր:

**2000 թվականից** ՀՀ ՆԳՆ Ակադեմիայի նոր կառուցվածքում ընդգրկվում է **վերապատրաստման և որակավորման բարձրացման ֆակուլտետը**, որը **2011 թվականին** վերանվանվում է **վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետ**, իսկ **2020 թվականից՝ վերապատրաստման կենտրոն**:

**2009 թվականից** կրթահամալիրը ԱՊՀ մասնակից երկրների ՆԳՆ բարձրագույն

ուսումնական հաստատությունների ասոցացիայի անդամ է:

**2011 թվականից** կրթահամալիրի ակադեմիայում մեկնարկում է մագիստրոսի կրթական ծրագրով ուսուցումը: **2013 թվականին** կրթահամալիրում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունների արդյունքում կրթահամալիրի ակադեմիայի կազմում ստեղծվում է **մագիստրատուրայի բաժանմունքը**:

**2011 թվականին** դեռևս 1956 թվականին Երևանում ստեղծված Հանրապետական ուսումնական կայանը վերանվանվում է «**ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոն**»:

**2011 թվականին** կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կազմում սկսում է գործել **միջին մասնագիտական կրթական ծրագրի իրականացումն ապահովող քոլեջը**:

**2011 թվականից** կրթահամալիրում **իրականացվում է հետբուհական մասնագիտական կրթություն**:

**2011 թվականին ստեղծվել է ուսանողական խորհուրդը**:

**2015 թվականին** ակադեմիայի և քոլեջի ամբիոններին կից ստեղծվում են գիտական խմբակներ:

**2016 թվականին** հիմնադրվում է «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիրը:

**2017 թվականին** հիմնադրվում է կրթահամալիրի «Պատիվ ունեմ» պաշտոնական թերթը:

**2017 թվականի ապրիլի 25-ին** կրթահամալիրի և ՍԻՊՈԼ-ի (Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալություն) միջև կնքվում է աշխատանքային պայմանագիր:

**2017 թվականի մայիսի 5-ից** կրթահամալիրն անդամակցում է Եվրոպական ոստիկանական քոլեջների ասոցիացիային (AEPC):

**2018 թվականից** «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիրն ընդգրկվում է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ ԿԳՆ Բարձրագույն որակավորման կոմիտեի համար ընդունելի գիտական հրատարակությունների ցանկում:

**2018 թվականից կրթահամալիրն անդամակցում է** Չինաստանի գլխավորությամբ ստեղծված ոստիկանական կրթական համագործակցության միջազգային ֆորումին:

**2018 թվականին** հիմնադրվում է Իրավաբանական կլինիկան, որի նպատակն է սովորողների գործնական հմտությունների և կարողությունների կատարելագործումը:

**2019 թվականին** «Մասնագիտական կրթության որակի ապահովման» ազգային կենտրոն հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի նիստում որոշում է կայացվում ՀՀ ոստիկանության կրթահամալիրին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով:

## ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Կրթահամալիրի առաքելությունն է կրթության զարգացման ոլորտում պետական և հանրային անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ռազմավարական ծրագրերի շրջանակներում գիտելիքների ստեղծումը, փոխանցումը և տարածումը: Նշված առաքելությունը նպատակ ունի նախապատրաստելու այնպիսի կադրեր, որոնք՝

- 1) կկարողանան առավելագույնս նպաստել Հայաստանի Հանրապետության իրավական և հասարակական անվտանգության ամրապնդմանը,
- 2) կկարողանան օրենքի սահմաններում ապահովել մարդու անվտանգությունը, սեփականության բոլոր ձևերի, ինչպես նաև՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերի պաշտպանությունը,
- 3) կկարողանան նախականիսել, կանիսել և խափանել հանցագործությունները ու վարչական իրավախախտումները,
- 4) կկարողանան հայտնաբերել և բացահայտել հանցագործությունները,
- 5) կկարողանան մատուցել որակյալ իրավաբանական օգնություն և հանրային որակյալ ծառայություններ:

Կրթահամալիրն իր առջև դրված խնդիրների լուծումը տեսնում է երկրի տնտեսության կարիքներին և հասարակության կրթական ու տեխնոլոգիական պահանջմունքներին հնարավորինս համահունչ կրթական ու գիտական ծրագրերի ստեղծման և իրականացման ճանապարհով:

Կրթահամալիրն իր առջև դրված խնդիրների լուծման ընթացքում էապես կարևորում է նաև պրոֆեսորադասախոսական կազմի և սովորողների մասնագիտական և անձնային որակների բարելավումը:

Կրթահամալիրի առաքելությունը միտված է՝ ուսումնագիտական ոլորտում ուսուցման և հետազոտությունների իրականացման նոր մեթոդների ներդրմամբ ապահովելու հանրային կարիքների ապահովման համար անհրաժեշտ կադրերի պատրաստումը: Կադրերի պատրաստման հարցում Կրթահամալիրը նպատակ ունի լուծել ոչ միայն մասնագիտական որակի ապահովման խնդիրը, այլև՝ կառավարչական և անձնական պատասխանատվության բարձր որակներով օժտված մասնագետների պատրաստման հարցը:

## ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Կրթահամալիրի հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է: Կրթահամալիրի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի նորմատիվ հրամաններին և կրթահամալիրի կանոնադրությանը համապատասխան: Կրթահամալիրի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, գործադիր մարմինը՝ կրթահամալիրի պետը: Կրթահամալիրի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է կրթահամալիրի պետն՝ անձամբ և իր տեղակալների միջոցով: Կրթահամալիրի պետին առընթեր գործում է կրթահամա-

լիրի խորհուրդը, որը խորհրդակցական մարմին է: Կրթահամալիրի խորհրդի կազմի մեջ մտնում են կրթահամալիրի պետը (խորհրդի նախագահ), կրթահամալիրի պետի տեղակալները, ֆակուլտետների պետերը, ուսումնական և գիտական այլ ստորաբաժանումների պետերը, ուստիկանության կադրերի վարչության պետի տեղակալը, ուսանողական խորհրդի նախագահը: Կրթահամալիրի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը լուծում է Կրթահամալիրի գիտական խորհուրդը: Գիտական խորհրդի անդամների 25 տոկոսը կազմում են կրթահամալիրի սովորողները:

Կրթահամալիրում գործում են նաև իրավագիտության, հեռակա ուսուցման ֆակուլտետների, քոլեջի, ուսումնական ու վերապատրաստման կենտրոնների խորհուրդները, որոնք խորհրդակցական մարմիններ են: Պրոֆեսորադասախոսական կազմի և սովորողների ներկայացուցիչները, ընդգրկված լինելով կրթահամալիրի բոլոր խորհուրդներում, հնարավորություն ունեն հանդես գալու առաջարկություններով, ներկայացնելու իրենց հուզող հարցերը, ստանալու պատասխաններ ու դրանց վերաբերյալ համապատասխան լուծումներ:

ՀՀ ուստիկանության պետի 2018թ. օգոստոսի 2-ի հրամանով ՀՀ ուստիկանության կրթահամալիրի պետ է նշանակվել ուստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Ավետիքի Բաբայանը (ընդունելության օրերը՝ յուրաքանչյուր ուրբաթ՝ ժամը 15<sup>00</sup>-17<sup>00</sup>, հասցեն՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի պողոտա 29, 5-րդ մասնաշենք):

## ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն ապահովող ակադեմիան, միջին մասնագիտական կրթական ծրագրի իրականացումն ապահովող քոլեջը, նախնական մասնագիտական կրթական ծրագրի իրականացումն ապահովող ուսումնական կենտրոնը, ինչպես նաև այլ ստորաբաժանումներ: Ակադեմիայի, քոլեջի և ուսումնական կենտրոնի պետերն ի պաշտոնե կրթահամալիրի պետի տեղակալներ են:

**Կրթահամալիրի ակադեմիայի** կազմում գործում են **իրավագիտության, հեռակա ուսուցման ֆակուլտետները, 6 ամբիոն և մագիստրատուրայի բաժանմունքը:**

**Իրավագիտության ֆակուլտետը** իրավագիտություն մասնագիտության գծով ուսումնական և գիտահետազոտական գործընթացների կազմակերպումն ու իրականացումն ապահովող հիմնական կառուցվածքային ստորաբաժանում է: Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և իրականացնում է ֆակուլտետի պետը: Ֆակուլտետում իրականացվում է «Իրավագիտություն» մասնագիտությամբ «Իրավագիտության բակալավր» որակավորմամբ առկա անվճար և վճարովի ուսուցում: Ուսման տևողությունը 4 տարի է:

**Հեռակա ուսուցման** ֆակուլտետը «Իրավագիտություն» մասնագիտության գծով ուսումնական գործընթացների կազմակերպումն ու իրականացումն ապահովող հիմնական կառուցվածքային ստորաբաժանում է: Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է ֆակուլտետի պետը: Ուսման տևողությունը 5 տարի է: Ուսում-



նական պլանով նախատեսված ողջ դասընթացը և ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտներին շնորհվում է «Իրավագիտություն» մասնագիտությամբ իրավագիտության բակալավրի աստիճան և տրվում պետական նմուշի դիպլոմ:

**Մագիստրատուրայի** բաժանմունքի գործունեության հիմնական ուղղություններն են՝ «Իրավագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրով բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստումը, ուսուցման որակի ընդունված չափանիշների և կրթական գործընթացի թափանցիկության ու հրապարակայնության ապահովումը, կրթական չափորոշիչներին ու առաջադրված խնդիրներին համապատասխան ուսումնական գործընթացի իրականացումը, սովորողների ինքնուրույն գիտական, ստեղծագործական և անհատական կարողությունների զարգացմանը նպաստող պայմանների ստեղծումը, կազմակերպվող կոնֆերանսներին, կյոբ սեղան-քննարկումներին, իրավագիտության տարբեր բնագավառներին վերաբերող մրցույթներին սովորողների մասնակցությունն ապահովելուն ուղղված աշխատանքների օժանդակումը: Բաժանմունքի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է բաժանմունքի պետը: Բաժանմունքում իրականացվում է «Իրավագիտություն» մասնագիտությամբ «Իրավագիտության մագիստրոս» որակավորմամբ առկա և հեռակա ուսուցում: Առկա ուսուցման տևողությունը 2 տարի է, հեռակա ուսուցման տևողությունը՝ 2.5 տարի

**Կրթահամալիրի քոլեջի** կազմում գործում են ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետը և 5 ամբիոն: Քոլեջի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է քոլեջի պետը: Քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետն իրականացնում է՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ «Ոստիկանության սպա» որակավորմամբ ուսուցում:

Նախնական մասնագիտական կրթական ծրագրի իրականացումն ապահովում է **ուսումնական կենտրոնը**, որի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ «Հատուկ պատրաստականություն» կրթաճյուղը, «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղը և նախնական մասնագիտական պատրաստականության բաժինը:

Ուսումնական կենտրոնն իրականացնում է՝

ա/ նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության «Ոստիկան» որակավորման դասընթացներ,

բ/ նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորման դասընթացներ,

գ/ ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստման դասընթացներ,

դ/ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատակիցների հատուկ պատրաստականության դասընթացներ,

ե/ նախնական մասնագիտական /արհեստագործական կրթության 0103 «Պահնորդական գործ» մասնագիտության «Պահնորդ» որակավորման դասընթացներ,

զ/ նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության 0102 «Թիկնապահական գործ» մասնագիտության «Թիկնապահ» որակավորման դասընթացներ:

**Ուսումնական կենտրոնի** գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է կենտրոնի պետը:

Լրացուցիչ կրթական ծրագրի իրականացումն ապահովում է **վերապատրաստման կենտրոնը**, որը ՀՀ ոստիկանական ծառայողների մասնագիտական վարպետության հետևողական կատարելագործման, գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների ուսումնասիրման, աշխատանքի առաջավոր փորձի կիրառման, գործնական հմտությունների և ունակությունների ձեռքբերման, մշտական մարտական պատրաստվածության և օպերատիվ ծառայողական խնդիրների իրականացման նպատակով կազմակերպում և իրականացնում է ՀՀ ոստիկանության միջին, ավագ և գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների, ինչպես նաև այլ իրավապահ մարմինների և գերատեսչությունների աշխատակիցների վերապատրաստում: Կենտրոնի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է կենտրոնի պետը:

Կրթահամալիրում գործում են նաև հետևյալ ստորաբաժանումները, որոնք իրականացնում են իրենց մասնագիտական գործառույթները՝

- 1) ուսումնամեթոդական և զարգացման վարչությունը,
- 2) կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժինը,
- 3) գիտական աշխատանքների բաժինը,
- 4) ծառայության բաժինը,
- 5) տնտեսական բաժինը,
- 6) ֆինանսական բաժինը,
- 7) կրթության որակի ապահովման բաժանմունքը,
- 8) քարտուղարությունը,
- 9) գնումների խումբը,
- 10) հերթապահ մասը,
- 11) բուժմասը,
- 12) ՀՀ ոստիկանության պատմության թանգարանը:



## ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ



Ոստիկանության կրթահամալիրում Որակի ապահովման ազգային և եվրոպական չափանիշների պահանջներին համահունչ՝ որակի ապահովման համակարգի հիմնումն սկսվել է 2016 թ.՝ որպես որակի ապահովման խումբ, իսկ 2017թ. հունիսին ստեղծվեց Կրթության որակի ապահովման բաժանմունքը՝ որպես առանձին վարչական միավոր: Կրթության որակի ապահովման բաժանմունքի հիմնական նպատակը կրթահամալիրում որակի ներքին ապահովման մեխանիզմների գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է:

Կրթահամալիրը կարևորում է շահառուների, այդ թվում՝ ուսանողական խորհրդի ներկայացուցիչների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացում, որակի ապահովման հանձնաժողովներում և գործընթացի մշտադիտարկմանը: Բա-

ժանմունքի գործունեության հիմքում ընկած է որակի ապահովման ցանցային համակարգը, որը հնարավորություն է տալիս առավելագույն թվով շահակիցների մասնակից դարձնել որակի ապահովման ներքին գործընթացներին: Ցանցային համակարգով գործունեությունը կազմակերպվում է գիտական խորհրդին կից ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովների, ամբիոնային պատասխանատուների և որակի ապահովման ուսանողական հանձնաժողովի միջոցով:

Բաժանմունքի կողմից կատարվող աշխատանքները ներառում են որակի ապահովման գործիքների և գործիքակազմերի մշակում, պարբերական աշխատանք ներքին և արտաքին շահակիցների հետ, հարցումների իրականացում, կրթական ծրագրերի պարբերական վերանայում, կրթահամալիրի կառուցվածքային հավատարմագրման նպատակով իրականացվող ինքնազննատման աշխատանքներին օժանդակում և այլն: Պարբերաբար իրականացվող տարբեր հարցումների, ֆոկուս խմբային աշխատանքների, անհատական հանդիպումների շրջանակներում սովորողներն իրենց կարծիքն են արտահայտում ուսումնական գործընթացի կազմակերպման, դասավանդման ընթացքում կիրառվող մեթոդների, կրթահամալիրի նյութատեխնիկական ռեսուրսների հասանելիության, արդյունավետության և այլնի մասին:

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ

Կրթահամալիրի իրավաբանական կլինիկան Կրթահամալիրում գործող անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրող ուսումնագործնական մարմին է: Իրավաբանական կլինիկայի սովորողները տրամադրում են անվճար խորհրդատվություն՝ քրեաիրավական և քաղաքացիաիրավական հարցերով, որը կարող է կատարվել ինչպես հաճախորդների ընդունման և անմիջական շփման ձևով, այնպես էլ էլեկտրոնային հաղորդակցությունների միջոցով:



Կլինիկայի գործունեության հիմնական խնդիրներն են՝

1. Սովորողների տեսական գիտելիքները կոնկրետ իրավիճակներում գործնականում կիրառելու հմտությունների ձևավորումը և զարգացումը,
2. Հատկապես սոցիալապես անապահով քաղաքացիներին իրավական օգնության տրամադրումը, բնակչության շրջանում իրավական քարոզչությունը, իրավագիտակցության բարձրացումը,
3. Ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման շրջանակների ընդլայնումը,
4. Դատարանների, իրավապահ մարմինների պրակտիկ գործունեության նյութերի օգտագործումն ուսումնական գործընթացում:

Կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի 3-րդ և 4-րդ կուրսի բարձր առաջադիմություն ունեցող սովորողները Կլինիկա ընդգրկվում են հարցազրուցի արդյունքների հիման վրա, որն անցկացվում է Կլինիկայի ղեկավարի և ղեկավարի օգնականի կողմից:

Հարցազրուցի միջոցով ընտրված սովորողների հետ իրականացվում է չորս շաբաթ տևողությամբ դասընթաց (կլինիկական ուսուցում), որի արդյունքներով Կլինիկայի ղեկավարի, Կլինիկայի ղեկավարի օգնականի և Կլինիկայի փաստաբանի կողմից սովորողին տրվում է խորհրդատվություն տրամադրելու իրավունք:

Կլինիկայում ուսուցում անցած և խորհրդատվություն տրամադրելու իրավունք ստացած սովորողներին Կրթահամալիրի պետի կողմից տրվում է հավաստագիր:

Կլինիկական ուսուցում ստացած, սակայն խորհրդատվություն տրամադրելու իրավունք չստացած սովորողների գործունեությունը Կլինիկայում կասեցվում է:

Կլինիկայում սովորողների գործունեությունը դադարեցվում է սեփական նախաձեռնությամբ, իսկ 4-րդ կուրսի սովորողների գործունեությունը դադարեցվում է 4-րդ կուրսի առաջին կիսամյակի քննաշրջանի սկսման ժամանակ:

Կլինիկայից սովորողները հեռացվում են Կլինիկայի աշխատանքներից առանց հարգելի պատճառների պարբերաբար բացակայելու կամ իրենց գործունեության ընթացքում էական խախտում թույլ տալու դեպքում:

## ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

«Ն ոստիկանության կրթահամալիրի արտաքին կապերի և միջազգայնացման համատեքստում զարգացման նպատակն է միջազգային համագործակցության արդյունքում բարելավել կրթական ծառայությունների և հետազոտությունների որակը, Կրթահամալիրի մրցունակությունն ազգային և միջազգային մակարդակներում, ստեղծել միջմշակութային երկխոսության նպաստավոր միջավայր և ապահովել շրջանավարտների պահանջվածությունը և մրցունակությունն ազգային և միջազգային մակարդակներում: Միջազգային ասպարեզում Կրթահամալիրի ծավալած գործունեության արդյունավետության և բարձր վարկանիշի դրսևորում է ԱՊՀ մասնակից երկրների ՆԳՆ բարձրագույն ուսումնական հաստատությունների ասոցիացիային անդամակցումը 11.09.2009թ. (անդամ պետություններ՝ Բելառուսի, Ղրղզստանի, Մոլդովայի, Տաջիկստանի, Ղազախստանի հանրապետություններ, Ռուսաստանի Դաշնություն), «Ն ոստիկանության կրթահամալիրի և ՍԻՊՈԼ-ի (52 անդամ պետության 78 կազմակերպություն) միջև աշխատանքային համաձայնագրի կնքումը 25.04.2017թ., 05.05.2017թ. «Ն ոստիկանության կրթահամալիրի անդամակցությունը Եվրոպական ոստիկանական քոլեջների ասոցիացիային AEPIC (42 անդամ պետության 54 կազմակերպություն), իսկ 2018 թվականից՝ Չինաստանի գլխավորությամբ ստեղծված ոստիկանական կրթական համագործակցության





միջազգային ֆորումին (շուրջ 30 պետությունների ոստիկանական ուսումնական հաստատություններ):



2013 թվականից ՀՀ ոստիկանության կրթահամալիրը մասնակցում է Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (ՍԻՊՈԼ, նախկինում՝ Եվրոպական ոստիկանական քոլեջ) փոխանակման ամենամյա ծրագրին: Կրթահամալիրի և

Գործակալության միջև կնքվել է աշխատանքային համաձայնագիր, որով հստակեցվել են համագործակցության ոլորտները և սահմանները: 2019 թվականին Կրթահամալիրի և գործակալության միջև ստորագրվել է Երկամյա համագործակցության պլան՝ Գործակալության կողմից կազմակերպվող ռեզիդենտալ դասընթացներին մասնակցության վերաբերյալ: ՀՀ ոստիկանության կրթահամալիրը Գործակալության հետ կապի՝ ՀՀ իրավապահ մարմինների ազգային կոնտակտային մարմին է, և համակարգում է ամենամյա փոխանակման ծրագրի իրականացման ընթացքը: Փոխանակման ծրագրին և ռեզիդենտալ դասընթացներին մասնակցության ծախսերը գրեթե ամբողջությամբ ֆինանսավորվում են Գործակալության բյուջեից:



**ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

Կրթական ծրագիրը	Մասնագիտության անվանումը	Ուսուցման ձևը	Ուսման տևողությունը	Որակավորումը	Ավարտելուց հետո շնորհվող կոչումը
Նախնական մասնագիտական	Ոստիկանական գործ	Առկա, պետական պատվերի շրջանակներում (անվճար)	3 ամիս	Ոստիկան	Ոստիկանության կրտսեր կամ միջին խմբի կոչումներ
			5 ամիս	Պարեկ	
Միջին մասնագիտական	Ոստիկանական գործ	Առկա, պետական պատվերի շրջանակներում (անվճար)	2 տարի	Ոստիկանության սպա	Ոստիկանության լեյտենանտ
Բակալավր	Իրավագիտություն	Առկա, պետական պատվերի շրջանակներում (անվճար)	4 տարի	Իրավագիտության բակալավր	Ոստիկանության լեյտենանտ
		առկա (վճարովի)			-----
		հեռակա, ոստիկանության ծառայողների համար (անվճար)	5 տարի		Ոստիկանության լեյտենանտ
Մագիստրատուրա	Իրավագիտություն	Առկա, ոստիկանության ծառայողների համար (անվճար)	2 տարի	Իրավագիտության մագիստրոս	-----
		հեռակա, ոստիկանության ծառայողների համար (անվճար)	2,5 տարի		-----
		հեռակա, (վճարովի)			-----
Ասպիրանտուրա	-----	Առկա (անվճար)	3 տարի	Գիտությունների թեկնածուի գիտական աստիճան	-----
		հեռակա (անվճար)	4 տարի		-----

Կրթահամալիրի ակադեմիայում և քոլեջում ուսուցումն իրականացվում է **առկա ուսուցման ձևով պետական պատվերի շրջանակներում (անվճար)**: Սովորողները համարվում են ՀՀ ոստիկանության ծառայողներ, և նրանք ուսման ողջ ժամանակահատվածում ստանում են վարձատրություն՝ ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

**Ակադեմիայի առկա ուսուցման ձևով պետական պատվերի շրջանակներում (անվճար)** սովորողներին ավարտելուց հետո շնորհվում է «Ոստիկանության լեյտե-



նանտ» կոչում, և նրանք նշանակվում են ՀՀ ոստիկանության համապատասխան ծառայությունների միջին խմբի պաշտոններում:

**Քոլեջի առկա ուսուցման ձևով պետական պատվերի շրջանակներում (անվճար)** սովորողներին ավարտելուց հետո շնորհվում է «Ոստիկանության լեյտենանտ» կոչում, և նրանք նշանակվում են ՀՀ ոստիկանության համապատասխան ծառայություններում՝ տեսուչի պաշտոններում:

Ուսման համար կարող են դիմել՝

1) առնվազն միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցող, ՀՀ մինչև 35 տարեկան և 160 սմ-ից ոչ պակաս հասակ ունեցող այն քաղաքացիները, ովքեր իրենց անձնական հատկանիշներով, առողջական վիճակով և ֆիզիկական պատրաստականությամբ ունակ են կատարելու ոստիկանության ծառայողի պարտականությունները.

2) արական սեռի այն քաղաքացիները, ովքեր անցել են պարտադիր զինվորական ծառայություն

3) Դիմորդների ընտրության մասին որոշումն ընդունում է ՀՀ ոստիկանության պետի հրամանով ստեղծված ՀՀ ոստիկանության կրթահամալիրի դիմորդների ընտրության մանդատային հանձնաժողովը՝ ուսումնասիրության նյութերի հիման վրա:

Ակադեմիայում և քոլեջում ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքներով՝ համապատասխան բարդության աստիճանի հետևյալ երեք ստուգումների հիման վրա.

1) մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգում (թեստավորում համակարգչի միջոցով),

2) հայոց լեզվի իմացության ստուգում (թեստավորում համակարգչի միջոցով),

3) ֆիզիկական պատրաստականության ստուգում:

Մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգումն իրականացվում է թեստային փաթեթի միջոցով, որով ուսումնասիրվում են դիմորդի մտավոր ունակությունները՝ ընդհանուր գիտելիքների մակարդակը, ռուսաց լեզվի իմացությունը, համակարգչային տարրական գիտելիքների առկայությունը և անձնային



որակները (սոցիալական վարքի առանձնահատկությունները, դրդապատճառային և այլ ոլորտներ):

Կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետում իրականացվում է «**Իրավագիտություն**» մասնագիտությամբ **բակալավրի** կրթական ծրագրով **առկա վճարովի ուսուցում (առանց պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքի)**: Առկա վճարովի ուսուցման արական սեռի սովորողները չեն օգտվում «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով նախատեսված տարկետման իրավունքից: Բակալավրի կրթական ծրագրով առկա վճարովի ուսուցմամբ իրավագիտության ֆակուլտետ ընդունվելու համար կարող են դիմել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող անձինք:

Առկա վճարովի ուսուցմամբ բակալավրիատ ընդունվելու համար դիմորդներն ընդունելության քննություններ են հանձնում մրցութային երկու առարկաներից՝

- 1) հայոց լեզու (թելադրություն),
- 2) հայոց պատմություն (թեստ):

Դիմորդն իր ցանկությամբ կարող է հանձնել միայն «Հայոց լեզու» առարկայի քննությունը՝ ներկայացնելով նաև «Հայոց պատմություն» առարկայի միասնական քննությունը հանձնելու վերաբերյալ «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված վկայագիրը (բնօրինակը):

Կրթահամալիրի ակադեմիայի՝ «Իրավագիտություն» մասնագիտությամբ **հեռակա** անվճար ուսուցման բակալավրիատ կարող են դիմել առնվազն 1 տարի ուստիկանության կրտսեր, միջին, ավագ, գլխավոր խմբերի պաշտոն զբաղեցնող մինչև 43 տարեկան ծառայողները:

Միջնակարգ ընդհանուր, նախնական, միջին մասնագիտական կրթություն ունեցող ուստիկանության ծառայողների ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքներով՝ «Հայոց լեզու» և «Հայոց պատմություն» առարկաների քննությունների ու «Ֆիզիկական դաստիարակություն» առարկայի ստուգման արդյունքների հիման վրա: Պե-



տական նմուշի բարձրագույն կրթության դիպլոմ ունեցող ոստիկանության ծառայողների ընդունելությունն իրականացվում է հարցազրույցի միջոցով՝ ընդունող հանձնաժողովի կողմից հաստատված հարցաշարի սահմաններում:

Կրթահամալիրի ակադեմիայի՝ «Իրավագիտություն» մասնագիտությամբ **առկա կամ հեռակա անվճար ուսուցման մագիստրատուրա** կարող են դիմել իրավագիտության բակալավրի որակավորում ունեցող (պետական նմուշի դիպլոմ) և առնվազն 1 տարի ոստիկանության կրտսեր, միջին, ավագ, գլխավոր խմբերի պաշտոն զբաղեցնող մինչև 43 տարեկան ծառայողները և ոստիկանության զորքերի զինծառայողները: Առկա անվճար ուսուցման տևողությունը 2 տարի է, հեռակա ձևով ուսուցման տևողությունը՝ 2.5 տարի:

Հեռակա **վճարովի ուսուցմամբ մագիստրատուրա** ընդունվելու համար կարող են դիմել իրավագիտության բակալավրի աստիճան (պետական նմուշի դիպլոմ) ունեցող անձինք:

Ակադեմիայի մագիստրատուրայում ընդունելությունն իրականացվում է հարցազրույցի միջոցով:

Կրթահամալիրի **առկա կամ հեռակա անվճար ասպիրանտուրա** կարող են դիմել դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող (պետական նմուշի դիպլոմ), առնվազն 2 տարի ոստիկանության միջին, ավագ, գլխավոր, բարձրագույն խմբերի պաշտոն զբաղեցնող ծառայողները և ոստիկանության զորքերի զինծառայողները:

Առկա ուսուցման ասպիրանտուրա կարող են դիմել մինչև 35 տարեկան, հեռակա ուսուցման ասպիրանտուրա՝ մինչև 43 տարեկան ոստիկանության ծառայողները:

Դիմորդի տարիքը և և ծառայության 1 տարվա ստաժը հաշվարկվում է ընդունելության ստուգումների (քննությունների) համար սահմանված ժամկետի վերջին օրվա դրությամբ:

Կրթահամալիրի ասպիրանտուրայի մրցույթն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կրթահամալիրի **ուսումնական կենտրոնում** ուսուցումն իրականացվում է առկա ուսուցման ձևով, պետական պատվերի շրջանակներում (անվճար): Սովորողները համարվում են ՀՀ ոստիկանության ծառայողներ, և նրանք ուսման ողջ ժամանակահատվածում ստանում են վարձատրություն՝ ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձի չափով: Շրջանավարտներին շնորհվում է ոստիկանության կրտսեր խմբի կոչումներ, և նրանք նշանակվում են ՀՀ ոստիկանության համապատասխան ծառայությունների կրտսեր խմբի պաշտոններում, իսկ պարեկ որակավորման դեպքում՝ կրտսեր և միջին խմբի պաշտոններում:



## ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

«Ն ոստիկանության համակարգի համար որակյալ կադրերի պատրաստումը «Ն ոստիկանության կրթահամալիրի առաջնային նպատակն է: «Ն ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայում իրականացվող բարձրագույն կրթության նպատակն է ապահովել սովորողների կողմից ոստիկանական գործունեության իրականացման համար անհրաժեշտ տեսական ու գործնական գիտելիքների յուրացումը: Այդ գործում էական նշանակություն ունի սովորողների պրակտիկայի արդյունավետ կազմակերպումն ու անցկացումը, որի ընթացքում սովորողները ձեռք են բերում գործնական հմտություններ՝ ոստիկանության ստորաբաժանումների կողմից անցկացվող միջոցառումներին և այդ միջոցառումների փաստաթղթավորմանը մասնակցելով:

«Ն ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի **առկա անվճար ուսուցման բակալավրիատի ուսումնական պրակտիկան** կազմակերպվում և անցկացվում է.

**1-ին կուրսում՝** «Ն ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժիններում՝ հինգ օր ընդհանուր տևողությամբ,

**2-րդ կուրսում՝** «Ն ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի՝ Երևան քաղաքի վարչության տարածքային բաժիններ գործուված վաշտերում՝ հինգ օր ընդհանուր տևողությամբ,

**3-րդ կուրսում՝** «Ն ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժինների համայնքային ոստիկանության բաժանումներում՝ երկու շաբաթ տևողությամբ,

**4-րդ կուրսում** հետաքննության գծով նախաավարտական պրակտիկան անցկացվում է «Ն ոստիկանության տարածքային բաժինների հետաքննության ստորաբաժանումներում՝ չորս շաբաթ տևողությամբ: Նախաավարտական պրակտիկայի նպատակը սովորողների՝ հետաքննության կատարման համար անհրաժեշտ գործնական ունակությունների ձևավորումն է: Պրակտիկայի ընթացքում սովորողների գործնական հմտությունները և ունակությունները ձեռք են բերվում հետաքննության ստորաբաժանումների առջև դրված խնդիրների լուծմանը նրանց մասնակցությամբ,

**4-րդ կուրսում** սովորողների նախաավարտական պրակտիկան անցկացվում է նաև «Ն ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ու նրանց ենթակայության տակ գտնվող տարածքային բաժինների օպերատիվ ստորաբաժանումներում՝ տասը շաբաթ տևողությամբ: Նպատակն է ուսումնառության ընթացքում ստացված տեսական գիտելիքների ամրապնդումը գործնական հմտություններով և ունակություններով, որոնք ձեռք են բերվում ոստիկանության քրեական հետախուզության ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծման ընթացքում, սովորողների անմիջական մասնակցությամբ: Սովորողները նախաավարտական պրակտիկան մեկ շաբաթ տևողությամբ անցնում են «Ն կրթության և գիտության նախարարության ավագ դպրոցներում՝ «Ն ոստիկանության անչափահասների գործերով ծառայության դպրոցական տեսուչների աշխատանքային գործունեությանը ծանոթանալու և պրակտիկ փորձ ձեռք բերելու նպատակով:

Ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի **բակալավրիատի առկա վճարովի ուսուցման 4-րդ** կուրսի սովորողների՝ հետաքննության գծով նախաավարտական պրակտիկայի նպատակը հետաքննության կատարման համար անհրաժեշտ գործնական ունակությունների ձևավորումն է: Սովորողները պրակտիկա են անցնում ՀՀ ոստիկանության տարածքային բաժինների հետաքննության ստորաբաժանումներում՝ տասը շաբաթ տևողությամբ:

Ակադեմիայի **հեռակա ուսուցման ֆակուլտետի բակալավրիատի 5-րդ** կուրսի (ոստիկանության կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնող) սովորողների նախաավարտական պրակտիկան անկացվում է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ու նրանց ենթակայության տակ գտնվող տարածքային բաժինների օպերատիվ ստորաբաժանումներում՝ հինգ շաբաթ տևողությամբ:

Ակադեմիայի **մագիստրատուրայի առկա ուսուցման 2-րդ և հեռակա ուսուցման 3-րդ** կուրսի սովորողների գիտամանկավարժական պրակտիկան անցկացվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության և հեռակա ուսուցման ֆակուլտետներում, քոլեջում, վերապատրաստման կենտրոնում: Պրակտիկայի տևողությունը առկա ուսուցման սովորողների համար չորս շաբաթ է, հեռակա ուսուցման սովորողների համար՝ երկու շաբաթ: Գիտամանկավարժական պրակտիկայի նպատակը դասախոսի մասնագիտական գործունեության առանձնահատկությունների հետ սովորողի ծանոթացումն է, մանկավարժական գործառույթների իրականացման հմտությունների ձևավորումը, գիտամանկավարժական խնդիրները լուծելու համար ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու ունակության ձևավորումը:

Ակադեմիայի **մագիստրատուրայի առկա ուսուցման 2-րդ և հեռակա ուսուցման 3-րդ** կուրսի սովորողների գիտահետազոտական պրակտիկան անցկացվում է մագիստրատուրայի ծրագրի իրացման մեջ ներգրավված ամբիոններում, ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներում՝ ելնելով մագիստրոսական թեզի թեմայի առանձնահատկություններից (անհրաժեշտության դեպքում), ինչպես նաև գիտական գրադարաններում: Պրակտիկայի տևողությունն առկա ուսուցման սովորողների համար չորս շաբաթ է, հեռակա ուսուցման սովորողների համար՝ երկու շաբաթ: Գիտահետազոտական պրակտիկայի նպատակը սովորողի ինքնուրույն գիտական հետազոտությունների իրականացման հմտությունների ձևավորումն է, ինչն իրականացվում է մագիստրոսական թեզի թեմայով գիտահետազոտական խնդիրների առաջադրման և լուծման միջոցով:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջում իրականացվող միջին մասնագիտական կրթության նպատակն է սովորողներին փոխանցել ոստիկանական գործունեության իրականացման համար անհրաժեշտ տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ: Այդ գործում էական նշանակություն ունեն **1-ին կուրսի** սովորողների 1-ին կիսամյակի ընթացքում ուսումնական ճանաչողական պրակտիկայի արդյունավետ կազմակերպումն ու անցկացումը՝ նպատակ ունենալով նրանց ծանոթացնել ոստիկանության տարածքային բաժնի հերթապահ մասի, թույլտվության և լիցենզավորման, պարեկապահակետային, համայնքային ոստիկանության, քրեական հետախուզության, անչափահասների գործերի, ընտանեկան բռնության կանխարգելման, պետական

պահպանության ծառայությունների գործունեության խնդիրներին և գործառույթներին: Ուսումնական պրակտիկան անցկացվում է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժիններում՝ հինգ օր ընդհանուր տևողությամբ:

**1-ին կուրսի սովորողները 2-րդ կիսամյակում** անցնում են նաև երեք շաբաթ տևողությամբ պրակտիկա, որից՝

- ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժինների հերթապահ մասերում՝ մեկ շաբաթ,

- ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության գնդի՝ Երևան քաղաքի վարչության տարածքային բաժիններ գործուղված գումարտակներում և վաշտերում՝ մեկ շաբաթ,

- ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժինների համայնքային ոստիկանության բաժանմունքներում՝ մեկ շաբաթ:

Նախաավարտական պրակտիկայի ընթացքում Կրթահամալիրի քոլեջի **2-րդ կուրսի** սովորողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները: Նախաավարտական պրակտիկան անցկացվում է վեց շաբաթ տևողությամբ՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժինների համայնքային ոստիկանության բաժանմունքներում:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի **ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական կրթության** սովորողները մասնագիտական պրակտիկա են անցնում ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդում /Երևան քաղաքի վարչության տարածքային ՊՊԾ ստորաբաժանումներում/, որի նպատակն է ուսումնառության ընթացքում ստացած տեսական գիտելիքների ամրապնդումը գործնական հմտություններով և ունակություններով, որոնք ձեռք են բերվում ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների առջև դրված խնդիրների լուծման ընթացքում սովորողների անմիջական մասնակցությամբ:

## ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Կրեղիտային համակարգն ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեղիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեղիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

Կրեղիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը միասնական համաեվրոպական կրեղիտային համակարգ է, որտեղ սովորողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեղիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում սովորողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

Կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար սովորողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեղիտների անհրաժեշտ քանակը:

Կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն:

Ակադեմիայի առկա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում սովորողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:

Հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում սովորողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի:

1 ECTS կրեդիտը համարժեք է սովորողի 30 լրիվ կամ 36 ակադեմիական ժամի ուսումնական բեռնվածությանը:

Ակադեմիայում ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Ուսումնական տարվա և կիսամյակի ուսումնական պարամունքների տևողությունը (հեռակա ուսուցման սովորողների ուսումնաքննական հավաքները՝ բացառությամբ 1-ին կիսամյակի) սահմանվում է ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցով:

Միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածության առավելագույն չափը 54 ժամ է (այդ թվում՝ լսարանային, արտալսարանային և ինքնուրույն), որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:

Ակադեմիայի կրթական ծրագրերում սովորողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կարող է լինել մինչև 30 ժամ՝ առանց ֆիզիկական պատրաստականության (ֆիզիկական կուլտուրայի):

Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է, իսկ մագիստրոսի կրթական ծրագրինը՝ 120 կրեդիտ:

Հետազոտողի կրթական աստիճանում (ասպիրանտուրայում) ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1350 ժամ, որը համարժեք է 45 ECTS կրեդիտի: 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը: Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Ասպիրանտի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 33,75 ժամ է, որը համարժեք է 1,125 ակադեմիական կրեդիտի:

## ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կրթահամալիրի կրթական ծրագրերում գործում է սովորողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ:

Կրթահամալիրի քոլեջի և ուսումնական կենտրոնի սովորողների 10 միավորով գնահատվող դասընթացի (մոդուլի) և ստուգաբային գնահատումով դասընթացի (մոդուլի) ուսումնառության արդյունքների, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման (քննությունների) գնահատման համար կիրառվում է գնահատման հետևյալ սանդղակը՝

Գնահատման միավոր	Գնահատականը տառանշումով
9-10	Գերազանց
7-8	Լավ
4-6	Բավարար
0-3	Անբավարար
0	Չներկայացած
Ստուգարքային գնահատում	Ստուգված / Չստուգված

Ակադեմիայի կրթական ծրագրերում սովորողի 20 միավորով գնահատվող դասընթացների (մոդուլների), կուրսային և դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանության, ամփոփիչ ատեստավորման, ստուգարքային գնահատումով դասընթացների (մոդուլների), պրակտիկումի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատման հետևյալ սանդղակը.

Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով
18-20	Գերազանց
13-17	Լավ
8-12	Բավարար
0-7	Անբավարար
0	Չներկայացած / չի ներկայացրել
Ստուգարքային գնահատում	Ստուգված / Չստուգված

Կրթահամալիրում ասպիրանտի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատման 5-միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Գնահատման միավոր	Գնահատականը
5	Գերազանց
4	Լավ
3	Բավարար
2	Անբավարար
Չն.	Չներկայացած
Ստ/չստ	Ստուգված, Չստուգված



## ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ

Ակադեմիայում կրթական ծրագրի յուրացումն ավարտվում է շրջանավարտների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ: Ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է պետական կրթական չափորոշիչներին համապատասխան և ավարտվում որակավորմամբ: Ամփոփիչ ատեստավորման թույլատրվում են այն շրջանավարտները, որոնք ավարտել են հիմնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման լրիվ դասընթացը և հաջողությամբ հանձնել ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված բոլոր քննություններն ու ստուգարքները և կուտակել համապատասխան կրեդիտներ:

Բակալավրի ամփոփիչ ատեստավորումը կարող է անցկացվել բանավոր կամ գրավոր:

Ամփոփիչ ատեստավորումը ներառում է ուսումնական պլանին համապատասխան մեկ կամ մի քանի ատեստավորման փորձառություններ՝

ա) առանձին առարկաներից (մոդուլներից) ամփոփիչ քննություններ.

բ) մասնագիտական ամփոփիչ համալիր քննություններ.

դ) դիպլոմային աշխատանքի պաշտպանություն:

Ամփոփիչ քննությունները հանձնվում և դիպլոմային աշխատանքները պաշտպանվում են ամփոփիչ ատեստավորման բաց նիստերում (բացի հատուկ առարկաների դեպքում):

Սովորողի կողմից մագիստրոսի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է մագիստրոսական թեզի կատարումով և պաշտպանությամբ: Մագիստրոսական թեզերը պաշտպանվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բաց նիստերում (բացի հատուկ առարկաների դեպքում):

Ակադեմիայի ամփոփիչ ատեստավորման գնահատման համար կիրառվում է գնահատման 20 միավորով սանդղակը:

Կրթահամալիրի քոլեջում շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգումը կարող է անցկացվել բանավոր կամ գրավոր: Պետական ամփոփիչ ստուգումը կարող է անցկացվել հետևյալ ձևերով՝

1) պետական քննություն մասնագիտական առանձին առարկայից (մոդուլից).

2) պետական քննություն մասնագիտական մի քանի առարկաներից (մոդուլներից) (միջառարկայական քննություններ).

3) ավարտական որակավորման դիպլոմային աշխատանք:

Դիպլոմային աշխատանքները պաշտպանվում են ամփոփիչ ատեստավորման բաց նիստերում (բացի հատուկ առարկաներից):

Ամփոփիչ ատեստավորման (քննությունների) գնահատման համար կիրառվում է գնահատման 10 միավորով սանդղակը:

Ամփոփիչ ատեստավորումը հաջողությամբ անցնելու դեպքում Կրթահամալիրի շրջանավարտներին շնորհվում է համապատասխան որակավորում և տրվում կրթությունը հաստատող ավարտական փաստաթուղթ: Ամփոփիչ ատեստավորումն հաջողությամբ անցած ակադեմիայի բակալավրիատի անվճար ուսուցման, մագիստրատու-

րայի ոստիկանության ծառայող շրջանավարտների և քոլեջի շրջանավարտների ցուցակը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կողմից ներկայացվում է ոստիկանության կադրային ստորաբաժանում՝ ոստիկանությունում համապատասխան պաշտոնի նշանակելու համար:

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհուրդը նպատակ ունի ներկայացնել Կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի առկա ուսուցման սովորողների շահերը Կրթահամալիրի ղեկավար մարմիններում և հանդիսանում է մշտական հիմունքերով գործող ներկայացուցչական մարմին, որի գործունեությունն ուղղված է սովորողների իրավունքների իրացման ապահովմանը և սոցիալական ակտիվության զարգացմանը:

Ուսանողական խորհրդի նպատակներն են՝

ա/ գերատեսչական և այլ իրավական ակտերով թույլատրված սահմաններում ապահովել Կրթահամալիրի գործունեության կազմակերպմանը մասնակցելու՝ սովորողների իրավունքի իրացումը,

բ/ մասնակցել ուսումնական գործընթացի որակի գնահատմանը,

գ/ աջակցել սովորողների գիտաուսումնական, մշակութային և սպորտային նախաձեռնությունների իրականացմանը,

դ/ աջակցել սովորողների սոցիալական հասունության, ինքնուրույնության, ինքնակազմակերպման և ինքնազարգացման կայացմանը:

Ուսանողական խորհրդի խնդիրներն են՝

ա/ մշակել Կրթահամալիրի ուսումնական և արտաուսումնական գործունեության առանցքային ոլորտներով առաջարկություններ և դրանց իրականացման մեխանիզմներ՝ հաշվի առնելով սովորողների խնդիրները կրթական, գիտական, մշակութային, ծառայողական, կազմակերպչական և կենցաղային ոլորտներում,

բ/ աջակցել սովորողների շահերին առնչվող հարցերի լուծմանը,

գ/ աջակցել սովորողների շրջանում մասնագիտական և ընդհանուր էթիկայի արմատավորմանը,

դ/ ապահովել սովորողների մասնակցությունը Կրթահամալիրի գիտական և նորարարական գործունեությանը,

ե/ կատարել սովորողների խրախուսման վերաբերյալ առաջարկություններ՝ ուսումնական և արտաուսումնական ոլորտներում ձեռքբերումների, այդ թվում՝ Կրթահամալիրի ուսանողական խորհրդի գործունեությանն օժանդակելու, գիտական և հասարակական կյանքին ակտիվ մասնակցելու համար,

զ/ աջակցել Կրթահամալիրում կարգապահության ամրապնդմանը

է/ աջակցել Կրթահամալիրի ղեկավարությանը տեղի ունեցող միջոցառումների կազմակերպման և անցկացման աշխատանքներում,

ը/ համագործակցելով Կրթահամալիրի ղեկավարության հետ՝ զարգացնել և ամրապնդել միջբուհական, միջտարածաշրջանային և միջազգային ուսանողական կապերը:

Ուսանողական խորհուրդն ընտրվում է երկու տարի ժամկետով: Կազմված է նախա-

գահից, գործառութային հանձնաժողովներից, քարտուղարից և խորհրդի անդամներից: Խորհրդի անդամներն ընտրվում են Կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի առկա ուսուցման սովորողներից՝ յուրաքանչյուր դասակից (խմբից, մագիստրատուրայի կուրսից) մեկ ներկայացուցիչ: Ուսանողական խորհրդի կազմում գործում է հինգ հանձնաժողով՝ ուսումնական հարցերի, կարգապահական հարցերի, կազմակերպչական հարցերի (սպորտային, մշակութային, ժամանցային միջոցառումների), արտաքին հարաբերությունների և կրթության որակի ապահովման:

## ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐ

Կրթահամալիրի ակադեմիայի սովորողներն ընդգրկված են գիտահետազոտական աշխատանքներում և գիտական խմբակներում, որոնց գործունեության նպատակն է՝ ակադեմիայի սովորողների ստեղծագործական մտածողության զարգացումը, մտահորիզոնի ընդլայնումը, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքի հմտություններ ձեռք բերելը, ինչպես նաև ՀՀ ոստիկանության համակարգի գիտամանկավարժական կադրերի պատրաստման համար թեկնածուների հետագա ընտրությունը:

Ակադեմիայի և քոլեջի ամբիոններին կից գործում են հետևյալ խմբակները.

1. Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնին կից՝ «Հանցագործության և պատժի հիմնահարցերի հետազոտության գիտական խմբակը»,
2. ՕՀԳ և կրիմինալիստիկայի ու քրեական դատավարության ամբիոններին կից՝ «Հանցագործությունների բացահայտման և քննության հիմնահարցերի հետազոտության գիտական խմբակը»,
3. Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնին կից՝ «Մասնավոր և քաղաքացիական դատավարության իրավունքի գիտական խմբակը»,
4. Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ու վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոններին կից՝ «Պետաիրավական առարկաների գիտական խմբակը»,
5. Հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոնին կից գործում է «Հասարակագիտական առարկաների գիտական խմբակը»:



## ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՌՈՐՅԱԼ

Կրթահամալիրում սովորողների կրթական կարիքներն ապահովելու և հագեցած կրթական միջավայր ստեղծելու նպատակով ստեղծված են իդեալական պայմաններ՝ ժամանակակից մեթոդների կիրառման համար անհրաժեշտ սարքավորումներով հագեցած լսարաններ, իմիտացիոն և առաջին բուժօգնության ցուցաբերման ուսուցման, համակարգչային կաբինետներ, դեպքի վայրի զննության լաբորատորիա, լեզուների մասնագիտացված լսարան, ուսանողական հանրակացարան, կրիմինալիստիկական, մարտական և լազերային հրաձգարաններ, ուսումնական կաբինետներ: Կրթահամալիրի տարածքում կան 4 մարզասրահ, վարժահրապարակ և բաց լողավազան, գործում են բուժկետ, ճաշարան և ուսանողական հանրակացարան:

«Ն ոստիկանության կրթահամալիրը շատ է կարևորում առողջ ապրելակերպը: Չափազանց կարևոր է կրթահամալիրում սովորողների և առողջական վիճակը, և կեցվածքը: Այդ իսկ պատճառով ամենօրյա պարապմունքների շնորհիվ նրանք ձեռք են բերում գերազանց ֆիզիկական վիճակ և մարզական պատշաճ հմտություններ, որոնք օգտագործվում են հետագա ծառայության ընթացքում: Կրթահամալիրի սովորողների և աշխատակիցների առողջության պահպանման, մարմնակրթության գործում զգալի ներդրում ունի «Մարտական և ֆիզիկական պատրաստականության» ամբիոնը: Բացի ուսումնական ծրագրերում ֆիզիկական պատրաստականության պարտադիր դասընթացից գործում են նաև սպորտային տարբեր խմբակներ, թիմեր: Աշխատակիցները և սովորողները պարբերաբար մասնակցում են Հայաստանում և Ռուսաստանում անցկացվող սպորտային առաջնություններին՝ սեղանի թենիս, շախմատ, ծանրաքար, բազկամարտ:

Կրթահամալիրում պատշաճ կազմակերպվում են առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված գործընթացները: Առողջապահական ոլորտի կարևոր ծառայություն է իրականացնում **բուժկետը**, որն ապահովված է առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքով և որոշ սարքավորումներով: Տարածքների անվտանգությունն ապահովվում է շուրջօրյա **հերթապահության միջոցով**, որը կազմակերպում է ծառայության բաժինը, և այդ գործընթացում ընդգրկված են նաև սովորողները:

Կրթահամալիրում առկա հանրակացարանի միջոցով ժամանակավոր անհատույց





բնակելի տարածություն է տրամադրվում բնակելի տարածքի կարիք ունեցող՝ կրթահամալիրի սովորողներին և վերապատրաստման նպատակով կրթահամալիր գործուղված ուստիկանության ծառայողներին: Հանրակացարանի բոլոր սենյակները կահավորված են անհրաժեշտ պարագաներով, սանհանգույցներով, լոգարաններով: Հանրակացարանում սենյակները տրամադրվում են «Հայաստանի Հանրապետության ուստիկանության կրթահամալիրի հանրակացարանի գործունեության» կարգի համաձայն:

Գիտական գործունեությունը խթանելու և ավելի մատչելի դարձնելու նպատակով գիտությամբ զբաղվող սովորողները, ինչպես նաև ասպիրանտները հնարավորություն ունեն կրթահամալիրում գործող «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրում անվճար տպագրելու հոդվածներ:



## ԳՐԱԴԱՐԱՆ

Կրթահամալիրի գրադարանն ստեղծվել է 1966թ. միլիցիայի դպրոցի բացման օրվանից: Գրադարանը բաղկացած է երկու մասից՝ ընդհանուր և հատուկ:

**Ընդհանուր** գրադարանը հագեցած է անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ: Գրադարանային ֆոնդում առկա գրականությունը մասնագիտական առումով համապատասխանում է Կրթահամալիրի ուսումնական, գիտական ծրագրերի արդի պահանջներին, և մասնագիտական գրականության մեծ մասի հեղինակները Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմն է: Գրադարանը հարուստ է նաև բառարաններով, հանրագիտարաններով, քարտեզներով: Որպես եզակի նմուշներ՝ Կրթահամալիրի գրադարանում կան նաև 1937, 1938, 1941, 1946թթ. գրքեր: Պարբերաբար գրադարանը համալրվում է նոր գրականությամբ, ստանում է պաշտոնական տեղեկագրեր և այլ նորմատիվ իրավական ակտեր:

**Հատուկ** գրադարանում պահվում են նեղ մասնագիտական և գաղտնիության աստիճան ունեցող գրքեր և տետրեր, որոնցից օգտվելու համար սահմանված է հատուկ ընթացակարգ: Հատուկ գրադարանն ունի իր ընթերցասրահները, որոնցում ևս սահմանված է գաղտնիության ռեժիմ:

Գործում է նաև էլեկտրոնային քարտադարան:

### «ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(Հաստատված է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 11.02.2015 թ.թիվ 2 նիստում)

#### I. Ընդհանուր դրույթներ

1. «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության ներքին կարգապահական կանոնները (այսուհետ՝ կանոններ) սահմանում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր) աշխատողներին, սովորողներին խրախուսելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու և կարգապահական տույժեր կիրառելու կանոնները, կարգապահական հարաբերություններին, առավոտյան շարային ստուգատեսի կազմակերպման և անցկացման, ներքին ծառայության վերակարգի և համակրթահամալիրային միջոցառումների կազմակերպմանն առնչվող և այլ հարցեր:

2. Կանոնների առանձին դրույթներ տարածվում են Կրթահամալիրի տարածքում գտնվող այն անձանց վրա, ովքեր Կրթահամալիրի հետ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ են, օգտվում են Կրթահամալիրի ծառայություններից կամ աշխատանքներից, համագործակցում են Կրթահամալիրի հետ, ինչպես նաև այլ նպատակներով ժամանակավորապես գտնվում են Կրթահամալիրի տարածքում:

## **II. Աշխատանքային և ուսումնական հաջողությունների խրախուսում**

3. Աշխատանքային պայմանագրով և օրենսդրությամբ նախատեսված պարտականությունների օրինակելի կատարման, աշխատանքի արդյունավետության բարձրացման, շարունակական անբասիր աշխատանքի, ուսման, նորամուծությունների և այլ ձեռքբերումների, գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցության համար աշխատողներին և սովորողներին սահմանվում են հետևյալ խրախուսանքները.

- ա) շնորհակալության հայտարարում.
- բ) միանվագ դրամական պարգևատրում.
- գ) Կրթահամալիրի պատվոգրի հանձնում.
- դ) հուշանվերով պարգևատրում
- ե) կարգապահական տույժի հանում:

4. Խրախուսանքը հայտարարվում է Կրթահամալիրի պետի հրամանով:

5. Կրթահամալիրի ոստիկանության ծառայողների նկատմամբ սույն կանոնների 3-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված խրախուսանքի միջոցից բացի կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված խրախուսանքի այլ միջոցներ:

## **III. Պատասխանատվությունը աշխատանքային և ուսումնական կարգապահության խախտման դեպքում**

6. Աշխատանքային կարգապահության խախտումը, այսինքն՝ Կրթահամալիրի աշխատողի կողմից կամ նրա մեղքով ՀՀ օրենսդրությամբ, Կրթահամալիրի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված աշխատանքային պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, առաջ է բերում օրենսդրությամբ սահմանված կարգապահական տույժերի կիրառում:

7. Աշխատանքային կարգապահության խախտման համար Կրթահամալիրի պետը կիրառում է հետևյալ կարգապահական տույժերը.

- ա) նկատողություն
- բ) խիստ նկատողություն
- գ) օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային պայմանագրի լուծում:

8. Կրթահամալիրի ոստիկանության ծառայողների նկատմամբ կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված տույժի տեսակներ:

9. Մինչև կարգապահական տույժի կիրառումն աշխատողից պետք է պահանջել գրավոր բացատրություն: Բացատրության բացակայությունը պետք է հաստատվի աշխատողի կողմից այն ներկայացնելու հրաժարման համապատասխան ակտով:

10. Կարգապահական տույժը կիրառվում է խախտումը հայտնաբերելուց հետո ոչ ուշ, քան չորս ամսվա ընթացքում՝ չհաշված աշխատողի հիվանդության կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածը:

11. Կարգապահական տույժը չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է մեկ տարի:



12. Աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ:

13. Եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, աշխատողը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի, ապա այն համարվում է մարված:

14. Սովորողի կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ, Կրթահամալիրի կանոնադրությամբ նախատեսված պարտականությունների, ներքին կարգապահության կանոնների խախտման դեպքում նրա նկատմամբ կիրառելի են հետևյալ կարգապահական տույժերը.

ա) նկատողություն,

բ) խիստ նկատողություն,

գ) հեռացում Կրթահամալիրից:

15. Կրթահամալիրի ոստիկանության ծառայող սովորողների նկատմամբ կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված տույժի տեսակներ:

16. Մինչև կարգապահական տույժի կիրառումը սովորողից պետք է պահանջել գրավոր բացատրություն: Բացատրության բացակայությունը պետք է հաստատվի սովորողի կողմից այն ներկայացնելու հրաժարման համապատասխան ակտով:

17. Կարգապահական տույժը կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ ոչ ուշ, քան չորս ամսվա ընթացքում և խախտումը կատարելուց ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում՝ չհաշված սովորողի հիվանդության կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածը:

18. Եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո՝ մեկ ուսումնական տարվա ընթացքում, սովորողը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի, ապա դա համարվում է մարված:

19. Ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 50 ժամից ավել անհարգելի բացակայության դեպքում առկա վճարովի ուսուցման սովորողին կարող է հայտարարվել նկատողություն:

20. Ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 90 ժամից ավել անհարգելի բացակայության դեպքում առկա վճարովի ուսուցման սովորողին կարող է հայտարարվել խիստ նկատողություն:

21. Ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 150 ժամից ավել (ուսումնական պլանով նախատեսված արտադրական պրակտիկայի մեկ երրորդի) անհարգելի բացակայության դեպքում առկա վճարովի ուսուցման սովորողը կարող է ազատվել Կրթահամալիրից:

22. Կրթահամալիրի մասնաշենքերում և տարածքում արգելվում է.

ա) ծխելը (բացառությամբ դրա համար առանձնացված հատուկ տարածքներում),

բ) ալկոհոլային խմիչքների օգտագործումը,

գ) թղթախաղերը,

23. Ուսումնական լսարաններում դասընթացի ժամանակ արգելվում է բջջային հեռախոսի օգտագործումը:

24. Անձնակազմին և այլ անձանց արգելվում է աղտոտել Կրթահամալիրի տարածքը, լսարանները, շենքերն ու շինությունները:



#### IV. Առավոտյան շարային ստուգատեսի կազմակերպում և անցկացում

25. Կրթահամալիրի ուստիկանության ծառայողների արտաքին տեսքի և համազգեստի ստուգման համար յուրաքանչյուր ամսվա առաջին երկուշաբթի անցկացվում է համընդհանուր շարային ստուգատես (այսուհետ՝ ստուգատես):

26. Առկա ուսուցման ուստիկանության ծառայող սովորողների (այսուհետ՝ սովորող) համար յուրաքանչյուր աշխատանքային օր անցկացվում է առավոտյան շարային ստուգատես:

27. Առավոտյան շարային ստուգատեսը սովորողների արտաքին տեսքի և շարային պատրաստվածության ստուգման ամենօրյա անցկացվող միջոցառում է:

28. Սովորողները պարտավոր են օրակարգով սահմանված ժամին ներկայանալ ստուգատեսին:

29. Ստուգատեսին պարտավոր են ներկայանալ ՀՀ ուստիկանության պետի կողմից հաստատված պահանջներին համապատասխանող համազգեստով:

30. Ստուգատեսի անցկացման համար սովորողները շարային հրապարակում տեղակայվում են ըստ կուրսերի:

31. Ստուգատեսից առաջ կուրսի պետն ստուգում է սովորողների ներկայությունը և արտաքին տեսքը, որի վերաբերյալ զեկուցում է ծառայության բաժնի պետին կամ նրա տեղակալին:

32. Անձնակազմի արտաքին տեսքի և ներկայության վերաբերյալ զեկույցից հետո անցկացվում է շարային երթ: Ստուգատեսի ավարտից հետո կուրսի պետերն ուղեկցում են կուրսերը դասացուցակով նախատեսված ուսումնագործնական պարապմունքների անցկացման վայր, որից հետո կուրսի պետը ծառայության բաժնի է ներկայացնում սովորողների քանակի վերաբերյալ շարային զեկույց:

33. Յուրաքանչյուր դասի ավարտից հետո կուրսի պետը հետևում է սովորողների վարքին:

34. Սովորողները պարտավոր են չաղմկել, թույլ չտալ համազգեստի խախտում, բարեխղճորեն վերաբերվել պետական գույքին:

35. Հաջորդ դասաժամի զանգը հնչելուց առաջ սովորողները պարտավոր են լինել սահմանված պարապմունքի անցկացման վայրում:

36. Ուսումնական պարապմունքներն ավարտելուց հետո սովորողներն ըստ կուրսերի շարվում են շարային հրապարակում:

37. Կուրսի պետն ստուգում է սովորողների ներկայությունը, որի վերաբերյալ զեկուցում է ծառայության բաժնի պետին կամ տեղակալին, որից հետո ստանալով համապատասխան թույլտվություն՝ կուրսի պետերը շարքով դուրս են բերում կուրսերը շարային հրապարակից և ճանապարհում տուն:

38. Առավոտյան ստուգատեսից ուշացման դեպքում կուրսի պետը ծառայության բաժնի պետին կամ նրա տեղակալին զեկուցում է բացակաների վերաբերյալ:

39. Ուշացած սովորողը, մտնելով Կրթահամալիրի տարածք, ներկայանում է կուրսի պետին, որն ուշացման պատճառները պարզելուց հետո զեկուցում է ծառայության բաժնի պետին կամ տեղակալին:

40. Մեկ ամսվա ընթացքում սովորողի մեկ անգամ ուշանալու դեպքում կուրսի պետը սովորողի հետ տանում է բացատրական աշխատանք, երկրորդ անգամ ուշանալու դեպքում սովորողին ներկայացնում է ծառայության բաժնի պետին կամ տեղակալին, որտեղ սովորողի հետ կրկին տարվում է բացատրական աշխատանք: Մեկ ամսվա ընթացքում նույն սովորողի կողմից երրորդ անգամ ուշանալու դեպքում կուրսի պետը զեկուցագիր է ներկայացնում Կրթահամալիրի պետին՝ համապատասխան տույժի ներկայացնելու համար:

41. Անհրաժեշտության դեպքում ծառայության բաժնի պետը հաճախակի ուշացումների համար կարող է միջնորդել սովորողին արտահերթ վերակարգ նշանակելու վերաբերյալ:

## **V. Ներքին ծառայության վերակարգի կազմակերպում**

42. Կրթահամալիրի տարածքում կազմակերպվում է վերակարգի շուջօրյա ծառայություն, որն իրականացվում է Կրթահամալիրի առկա ուսուցման սովորողներով:

43. Կուրսի պետերը նախապես կազմում են յուրաքանչյուր կուրսի համար վերակարգի ծառայության գրաֆիկ:

44. Գրաֆիկը համաձայնեցվում և հաստատվում է ծառայության բաժնի պետի տեղակալի և ծառայության բաժնի պետի կողմից:

45. Ընդունող վերակարգը մինչև ծառայության անցնելը սահմանված ժամին ներկայանում է հերթապահ մաս:

46. Օրվա հերթապահին ընդունող վերակարգին շարուն է նախատեսված վայրում, ստուգում վերակարգի ներկայությունը, արտաքին տեսքը և իրենց պարտականությունների իմացությունը:

47. Դրանից հետո տալով համապատասխան հրահանգներ՝ վերակարգին ուղարկում է ըստ ծառայության վայրերի:

48. Հրահանգավորմանը պարտադիր մասնակցում է հերթապահ ծառայության պետը և օրվա պատասխանատու սպան:

49. Կրթահամալիրի տարածքում գործում է երեք հսկիչ անցագրային կետ (այսուհետ՝ ՀԱԿ):

50. Յուրաքանչյուր ՀԱԿ-ում նշանակվում է ՀԱԿ-ի ավագ, որը ենթարկվում է հերթապահին և նրա օգնականին:

51. Վերակարգի կազմը հրահանգավորում ստանալուց հետո ավագի գլխավորությամբ գնում է ծառայության վայր, որտեղ տեղի է ունենում ՀԱԿ-ի հանձնում և ընդունում:

52. ՀԱԿ-ի ավագն ստուգում է ՀԱԿ-ի մաքրությունը և գույքի առկայությունը, ընդունում է հանձնող վերակարգից ՀԱԿ-ի հերթապահությունը, որի մասին գրառում է կատարում ՀԱԿ-ի հերթապահության ընդունման և հանձնման մատյանում ու այդ մասին զեկուցում օրվա հերթապահին:

53. Շուրջօրյա ծառայություն իրականացնելուց հետո վերակարգը հերթապահությունը հանձնում է ընդունող վերակարգին և ներկայանում հերթապահ մաս:

54. Հերթապահը նախատեսված վայրում շարում է հանձնող վերակարգին, նշում է օրվա ընթացքում թույլ տված թերությունները և համարում ծառայությունն ավարտված:

55. Սովորողները, ավարտելով ծառայությունը, գնում են հանգստանալու, իսկ հաջորդ օրն առավոտյան սահմանված ժամին ներկայանում են Կրթահամալիր՝ ուսումնական պարապմունքներին մասնակցելու համար:

56. Վերակարգի ծառայության հրահանգավորումից ուշանալու դեպքում օրվա հերթապահը պարտավոր է տեղեկացնել ուշացող սովորողի կուրսի պետին: Կուրսի պետը շատ շտապ պարզաբանում է ուշանալու պատճառը և տեղեկացնում հերթապահին:

57. Եթե սովորողը կհասցնի ներկայանալ մինչև հրահանգավորման ավարտը, ապա օրվա հերթապահը հրահանգավորում է սովորողին, որից հետո սովորողն անցնում է ծառայության: Վերակարգի ծառայությունը հանձնելուց հետո սովորողն ուշանալու վերաբերյալ բացատրություն է տալիս կուրսի պետին:

58. Մինչև հրահանգավորման ավարտը սովորողի չներկայանալու դեպքում կուրսի պետը փոխարինում է վերակարգի մեջ գտնվող սովորողին մեկ այլ սովորողով:

59. Փոխարինված սովորողը հրահանգավորվելուց հետո անցնում է ծառայության:

60. Վերակարգից ուշացած սովորողն ազատվում է ծառայությունից և կուրսի պետին տալիս է բացատրություն ուշացման վերաբերյալ:

61. Կուրսի պետը համապատասխան բացատրություն ստանալուց հետո պարտավոր է բացատրական աշխատանք տանել ուշացած սովորողի հետ, իսկ կրկնվելու դեպքում զեկուցագրով ներկայացնել Կրթահամալիրի պետին՝ համապատասխան տույժի ներկայացնելու համար:

62. Ուսումնական պարապմունքերից, վերակարգից սովորողն ազատվում է կուրսի պետի միջնորդությունը ներառող հիմնավորված զեկուցագրի հիման վրա:

## VI. Համակրթահամալիրային միջոցառումներ

63. Կրթահամալիրում հաճախակի կազմակերպվում և անցկացվում է տարբեր տեսակի մշակութային մասսայական միջոցառումներ, որոնք անցկացվում են ակումբում:

64. Սովորողների ներկայությունը միջոցառմանն ապահովելու համար նախապես նշված ժամին շարվում են շարային հրապարակում, որից հետո, ըստ կուրսերի, շարքով մոտենում են ակումբի մուտքին և աջից մեկական մտնում են ակումբ ու զբաղեցնում նախապես նշված տեղերը:

65. Միջոցառման ընթացքում կուրսի պետերը հետևում են իրենց սովորողներին, որպեսզի լռություն և կարգուկանոն պահպանվի:

66. Միջոցառման ավարտից հետո սովորողներն ըստ կուրսերի դուրս են գալիս ակումբից և շարվում շարային հրապարակում:

67. Շարվելուց հետո կուրսի պետերն ստուգում և զեկուցում են քանակի վերաբերյալ, և ստանալով համապատասխան թույլտվություն՝ շարժվում են օրակարգով:

ԿԱՐԳ

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԶԱՏՄԱՆ,  
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ  
ՏԵՂԱՓՈԽՄԱՆ**

(Հաստատված է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի  
11.02.2015թ. թիվ 2 նիստում)

**II. Սովորողների ազատումը Կրթահամալիրից**

2. ՀՀ ոստիկանության պետի հրամանով Կրթահամալիրից ոստիկանության ծա-  
այող սովորողն ազատվում է.

1) «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով նախա-  
տեսված դեպքերում,

2) անհարգելի բացակայությունների համար (այդ թվում՝ պրակտիկայից և ստաժա-  
վորումից),

3. Կրթահամալիրի պետի հրամանով Կրթահամալիրից սովորողն ազատվում է՝

1) անբավարար առաջադիմության պատճառով՝

ա. քննաշրջանի ընթացքում դիֆերենցված ստուգարքից, քննությունից, կուրսային  
աշխատանքի պաշտպանությունից, ստաժավորման, պրակտիկայի, պրակտիկումի  
պաշտպանությունից կամ ստուգարքից ստացել է երեք անբավարար գնահատական  
(չստուգված).

բ. 3-րդ կետի ա. պարբերությունով նախատեսված ստուգման նույն ձևից երեք ան-  
գամ ստացել է անբավարար գնահատական (չստուգված).

գ. ստացել է անբավարար (չստուգված) ակադեմիական տարբերությունից (պարտք):

2) անձնական նախաձեռնությամբ՝ Կրթահամալիրից ազատվելու վերաբերյալ գրա-  
վոր զեկուցագրի (դիմումի) հիման վրա,

3) վճարովի ուսուցման սովորողները նաև պայմանագրային պարտավորություննե-  
րը չկատարելու, մահվան դեպքերում,

4) **(4-րդ ենթակետն ուժը կորցրած է ճանաչվել գիտական խորհրդի 12.02.2019թ.  
որոշմամբ, արձ. թիվ 2)**

5) այլ ուսումնական հաստատություն տեղափոխման դեպքում,

6) ակադեմիական արձակուրդի ժամկետը լրանալուց հետո 10-օրյա ժամկետում ան-  
հարգելի պատճառով չներկայանալու դեպքում,

7) վճարովի ուսուցման սովորողները նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով  
ազատագրվման հետ կապված պատժի դատապարտման դեպքում:

3.1. Կրթահամալիրի պետի հրամանով սովորողը Կրթահամալիրից կարող է ազատ-  
վել նաև Կրթահամալիրի ներքին կարգապահական կանոնների խախտման դեպքում:

4. Ասպիրանտուրայի հեռակա ուսուցման սովորողը Կրթահամալիրից ազատվում է՝

1) սույն կարգի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 3-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթա-  
կետերով և 3.1 կետով նախատեսված դեպքերում,

2) ատեստավորումը չանցնելու դեպքում:

5. Կրթահամալիրից սովորողի ազատման մասին հրամանը տրվում է Կրթահամալիրի պետի կողմից: Ոստիկանության ծառայող սովորողի ազատման հիմքերը և հրամանի մեկ օրինակն ուղարկվում է ոստիկանության կադրային ստորաբաժանում:

6. Կրթահամալիրի ներքին կարգապահական կանոնների կոպիտ խախտման հիմքով ոստիկանության ծառայող սովորողի Կրթահամալիրից ազատելու մասին հրամանը տրվում է ՀՀ ոստիկանության պետի կողմից:

7. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի հիմքերով Կրթահամալիրի սովորողին ոստիկանությունում ծառայությունից ազատելու դեպքում՝ ՀՀ ոստիկանության համապատասխան կադրային ստորաբաժանումը Կրթահամալիր է ուղարկում ազատման մասին հրամանի պատճենը, որի հիման վրա սովորողն ազատվում է Կրթահամալիրից:

### **III. Կրթահամալիրի սովորողների ուսումնառության ընդհատումը**

8. Կրթահամալիրի սովորողի ուսումնառությունն ընդհատվում է.

1) առողջական վիճակի պատճառով,

2) հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքում:

3) վճարովի ուսուցման սովորողի՝ ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում:

9. Սույն կարգի 8-րդ կետով նախատեսված դեպքերում (համապատասխան փաստաթղթերով հիմնավորված) սովորողի զեկուցագրի (դիմում) հիման վրա Կրթահամալիրի պետի հրամանով ձևակերպվում է ակադեմիական արձակուրդ՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, որի ավարտից հետո սովորողը կարող է շարունակել ուսումնառությունը նույն կուրսում:

10. Ուսումնառության ժամանակահատվածում սովորողը կարող է ձևակերպել ակադեմիական արձակուրդ ոչ ավել, քան մեկ անգամ:

### **IV. Սովորողների վերականգնում**

11. Կրթահամալիրից ազատված սովորողների ուսանողական իրավունքներն իրենց զեկուցագրի (դիմումի) հիման վրա, որին կցվում է ակադեմիական տեղեկանքը կամ ստուգման գրքույկի պատճենը, անվճար ուսուցման ձևերում կարող են վերականգնվել ՀՀ ոստիկանության պետի հրամանով՝ Կրթահամալիրի գիտական խորհրդի միջնորդությամբ: Վերականգնման մասին ՀՀ ոստիկանության պետի հրամանի հիման վրա ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով ընդգրկվում է տվյալ կուրսի համապատասխան դասակում:

12. Կրթահամալիրից ազատված սովորողների ուսանողական իրավունքներն իրենց դիմումի հիման վրա, որին կցվում է ակադեմիական տեղեկանքը կամ ստուգման գրքույկի պատճենը, վճարովի ուսուցման ձևերում կարող են վերականգնվել Կրթահամալիր-

րի գիտական խորհրդի միջնորդությամբ՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով՝ նշելով կուրսը և խումբը: Վերականգնման հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո:

14. Ուսանողական իրավունքների վերականգնման դիմումները ներկայացվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում, իսկ հեռակա համակարգում՝ կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երեք շաբաթների ընթացքում:

15. Վերականգնման դիմումը (զեկուցագիրը) ներկայացնելու պահին ոստիկանության ծառայող չհանդիսացող սովորողների ուսանողական իրավունքների վերականգնման նյութերը պատրաստվում են Կրթահամալիրի, իսկ ոստիկանության ծառայող հանդիսացող սովորողների ուսանողական իրավունքների վերականգնման նյութերը՝ ոստիկանության կադրային ստորաբաժանման կողմից:

16. Ազատված սովորողը, որպես կանոն, վերականգնվում է այն կիսամյակում, որից նա ազատվել է, եթե վերականգնման պահին առարկայական անհամապատասխանություններով պայմանավորված կրեդիտների, առարկաների (մոդուլներ) գումարային քանակը չի գերազանցում օրենսդրությամբ սահմանված չափը: Գերազանցելու դեպքում սովորողին առաջարկվում է վերականգնվել ավելի ցածր կիսամյակում՝ բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակի:

17. Մեկ կամ երկու ակադեմիական պարտք ունեցող սովորողը կարող է վերականգնվել հաջորդ կիսամյակում (կուրսում), եթե նա մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը Կրթահամալիրի պետի հրամանով ձևավորված հանձնաժողովին հանձնում է անհատական ժամանակացույցով սահմանված ակադեմիական պարտքերը:

## **V. Կրթահամալիրում սովորողների տեղափոխումն առկա ուսուցումից հեռակա ուսուցման**

18. Առկա ուսուցումից հեռակա ուսուցման տեղափոխությունը կատարվում է քննաշրջանի ավարտից հետո տվյալ կուրսում ազատ տեղերի առկայության դեպքում՝ սովորողի զեկուցագրի հիման վրա (որին կցվում են ակադեմիական և հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսումնասիրության արդյունքների և առաջարկությունների վերաբերյալ տեղեկանքները), Կրթահամալիրի և ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման պետի համաձայնությամբ:

19. Կրթահամալիրի պետը տեղափոխման վերաբերյալ կարող է համաձայնություն տալ՝ հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսումնասիրության արդյունքներով, սովորողի տեղափոխման վերաբերյալ առաջարկությունների հիման վրա: Առկա ուսուցման սովորողն ակադեմիական տեղեկանքը ներկայացնում է հեռակա ուսուցման ֆակուլտետ, որի հիման վրա ֆակուլտետն իրականացնում է ուսումնասիրություն՝ ազատ տեղերի առկայության և համապատասխան կիսամյակի (կուրս) վերաբերյալ:

20. ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման պետի կողմից՝ սովորողին ոստիկանությունում կրտսեր խմբի պաշտոնում նշանակելու մասին հրամանի արձակումից հետո Կրթահամալիրի պետի հրամանով սովորողը տեղափոխվում է հե-

ռակա ուսուցում:

21. Մեկ կամ երկու ակադեմիական տարբերություն (պարտք) ունեցող սովորողը կարող է տեղափոխվել հեռակա ուսուցման հաջորդ կիսամյակ (կուրս), եթե նա մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը Կրթահամալիրի պետի հրամանով ձևավորված հանձնաժողովին հանձնում է անհատական ժամանակացույցով սահմանված ակադեմիական տարբերությունները (պարտք):

24. Չի թույլատրվում հեռակա ուսուցումից առկա ուսուցման տեղափոխումը:

## **VI. Այլ բուհից Կրթահամալիր սովորողի տեղափոխությունը**

25. Կրթահամալիրի վճարովի ուսուցման համակարգ կարող են տեղափոխվել միայն պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների սովորողները: Կրթահամալիրից այլ ուսումնական հաստատություն տեղափոխությունը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

26. Տեղափոխության մասին սովորողների դիմումներն ընդունվում են համապատասխան ձևով ուսուցման կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթվա ընթացքում:

27. Ուսանողի տեղափոխությունը Կրթահամալիր իրականացվում է պետին հասցեագրված դիմումի համաձայն, որին կցվում է սովորած բուհի կողմից տրամադրված ակադեմիական տեղեկանքը կամ ստուգման գրքույկի պատճենը: Չի թույլատրվում բակալավրի կրթական ծրագրով առաջին և ավարտական կուրսերում սովորողների տեղափոխությունը: Մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների տեղափոխությունը թույլատրվում է առաջին կիսամյակի ավարտից հետո:

28. Սովորողի տեղափոխությունը թույլատրվում է, եթե տեղափոխման պահին ուսումնառած ծրագրի և ընդունող ծրագրի բովանդակությունների տարբերությամբ պայմանավորված՝ առարկայական տարբերությունների թիվը չի գերազանցում 20 կրեդիտը: Հակառակ պարագայում սովորողին առաջարկվում է փոխադրվել ավելի ցածր կիսամյակում սովորելու, որի դեպքում առարկայական անհամապատասխանությունների նշված պահանջը բավարարվում է: Գոյացած ակադեմիական տարբերությունները ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը հանձնվում են Կրթահամալիրի պետի՝ կցագրման հրամանով /ժամանակավոր հրամանագրում/ հաստատված անհատական ժամանակացույցով:

29. Օտարերկրյա բուհերից սովորողների տեղափոխության դեպքում հանձնման ենթակա ստուգաթքների և քննությունների թվի մեջ չեն ներառվում հայագիտական առարկաները: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ սովորողն օտարերկրյա բուհում (որպես մասնագիտական) ուսումնասիրել է հայագիտական առարկաներ:

30. Սովորողի տեղափոխությունը թույլատրվում է տվյալ մասնագիտության գծով լիցենզիայով հատկացված ընդունելության սահմանային տեղերի (ըստ ուսուցման ձևերի և որակավորման աստիճանների) շրջանակում:

31. Եթե տվյալ ազատ տեղին հավակնողների թիվը մեկից ավել է, ապա կազմա-

կերպվում է ատեստավորում և անցկացվում է մրցույթ, որտեղ առաջնահերթությունը տրվում է.

1) առավել բարձր միջին որակական գնահատական ունեցողին,

2) տվյալ մասնագիտության ընդհանուր մասնագիտական առարկաների միջին որակական գնահատական ունեցողին,

3) հավասար պայմանների դեպքում կատարվում է գիտելիքի ստուգում թեստավորման եղանակով:

32.Տեղափոխությունը կատարելիս պետք է պահպանել ուսումնական ծրագրերի միջև եղած տարբերությունը՝ մեկ ուսումնական տարին չգերազանցելու պարտադիր պահանջը:

34. Հրամանի 2-րդ ենթակետում նշվում են առաջացած ակադեմիական տարբերությունները (ակադեմիական պարտք) և հանձնման ժամկետը:

35. Կցագրված սովորողին թույլատրվում է մասնակցել համապատասխան խմբի ակադեմիական ուսումնական պարապմունքներին:

36. Տեղափոխվող սովորողին Կրթահամալիրը տալիս է սահմանված նմուշի տեղեկանք (Ձև), որպեսզի իր նախկին բուհից ներկայացնի ազատման մասին հրամանի պատճենը, միջնակարգ կրթության ավարտական վկայականը, անձնական գործի և ընդունելության քննություններին առնչվող փաստաթղթերը: Սովորողն առձեռն ներկայացնում է, կամ նախկին բուհը փոստով առաքում է նշված փաստաթղթերը, որից հետո Կրթահամալիրում կազմվում է սովորողի նոր անձնական գործ:

37. Ակադեմիական տարբերությունները (ակադեմիական պարտք) հանձնելուց, պայմանագիրը կնքելուց, տվյալ կիսամյակի վարձավճարը մուծելուց և նախկին բուհից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում Կրթահամալիրի պետի կողմից տրվում է հրաման:

38. Կրթահամալիրի պետը տեղափոխվող սովորողին տվյալ կիսամյակում ազատում է նախկինում ուսումնասիրած և համապատասխան կրեդիտներ հավաքած առանձին առարկաների ուսումնական պարապմունքներից:

## **«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

(Քաղվածք)

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին»**

**ՀՀ օրենք**

**(Ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին)**

### **Հոդված 17. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողները**

1. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողը բարձրագույն (հետբուհական) կրթության սուբյեկտ է:

2. Բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողները (կուրսանտները,



ունկնդիրները), ասպիրանտները (այսուհետ՝ սովորողներ) կարող են իրենց հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջմունքների, ընտրել մասնագիտությունը, բարձրագույն ուսումնական հաստատության տեսակը և ուսուցման ձևը, տեղափոխվել բարձրագույն ուսումնական այլ հաստատություն (ներառյալ՝ օտարերկրյա պետությունների), զբաղվել հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը, բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան՝ լիիրավ մասնակցել բարձրագույն ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինների աշխատանքներին:

### **3. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողն իրավունք ունի՝**

1) ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են համապատասխան ֆակուլտետը (ուսումնական ստորաբաժանումը) և ամբիոնը.

2) մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները.

3) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ այդ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով.

4) մասնակցելու բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ նախատեսված օրենքով կամ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ.

5) անվճար օգտվելու բարձրագույն ուսումնական հաստատությունների գրադարաններից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին և սիմպոզիումներին.

6) բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

7) օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

8) ՀՀ գործող օրենսդրությամբ և բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի, ներառյալ՝ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ, ինչպես նաև ուսանողական վարկ.

9) ծանոթանալու բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը և նորմատիվ այլ փաստաթղթերի, կնքելու պայմանագիր բարձրագույն ուսումնական հաստատության հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ.

10) լիազորված մարմնի սահմանած կարգով անհրաժեշտության դեպքում ստանալու

ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

11) ուսուցման առկա ձևով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ գտնվելու արձակուրդում՝ ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ.

12) հանրակացարանի առկայության և բնակելի տարածքի կարիք ունենալու դեպքերում բարձրագույն ուսումնական հաստատության սահմանած կարգով ստանալու հանրակացարանում համապատասխան տեղ.

13) փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ներառյալ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգի.

14) ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և (կամ) նյութական խրախուսանք՝ ՀՀ օրենսդրությամբ և բարձրագույն ուսումնական հաստատության սահմանած կարգով:

4. Կրթությունն ընդհատած նախկին սովորողը, անկախ ընդհատման պատճառից, իրավունք ունի վերականգնելու իր ուսանողական իրավունքները՝ բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակում կրթության ընդհատման:

Արգելվում է սովորողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

5. Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում: Ուսանողական խորհուրդների և ուսանողական գիտական ընկերությունների ստեղծման և գործունեության կարգը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Ուսանողական խորհուրդների և ուսանողական գիտական ընկերությունների գործունեությունը ֆինանսավորվում է բարձրագույն ուսումնական հաստատության արտաբյուջետային միջոցների հաշվին: Ֆինանսավորման չափը սահմանում է բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդը:

(Քաղվածք)

**«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք  
(Ընդունված է 2002 թվականի հուլիսի 3-ին)**

**Հոդված 3. Ոստիկանության ծառայողը**

1. Ոստիկանության ծառայող է համարվում ՀՀ այն քաղաքացին, ով ծառայում է ոստիկանությունում, տվել է ոստիկանության ծառայողի երդում, զբաղեցնում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված որևէ խմբի պաշտոն և ունի ոստիկանության կամ զինվորական կոչում կամ սույն օրենքով սահմանված կարգով գտնվում է ոստիկանության կադրերի ռեզերվում կամ կադրերի գործող ռեզերվում:

Ոստիկանության ծառայող են համարվում նաև Ոստիկանության ուսումնական հաս-

տատությունում պետական պատվերի շրջանակներում սովորող (այսուհետ՝ սովորող), ինչպես նաև ՀՀ կամ օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություն Ոստիկանության կողմից գործուղված առկա ուսուցման ձևով սովորող ՀՀ քաղաքացիները:

### **Հոդված 21. Ոստիկանության ծառայողի վարձատրությունը**

1. Ոստիկանության յուրաքանչյուր ծառայող (սույն օրենքով սահմանված դեպքերում նաև ոստիկանության ծառայության կադրերի ռեզերվում գտնվողները) ունի վարձատրության իրավունք:

1.1. Ոստիկանության ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակներում կրթություն ստացող սովորողներն ուսման ողջ ժամանակահատվածում ստանում են վարձատրություն՝ ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

### **Հոդված 27. Ոստիկանության ծառայողի համազգեստը, վկայականը և անձնական գործը**

1. Ոստիկանության ծառայողին և ոստիկանության ուսումնական հաստատության սովորողներին անվճար տրվում է ոստիկանության ծառայողի հանդերձանք, այդ թվում՝ համազգեստ, որի նկարագիրը և կրելու ժամկետները սահմանում է Կառավարությունը:

### **Հոդված 34. Ուսումնական արձակուրդը**

Ուսումնական հաստատություններում հեռակա ուսուցման ձևով սովորող՝ ոստիկանության ծառայողներին տրամադրվում է ուսումնական արձակուրդ՝ ուսումնաքննական ժամկետներին համապատասխան:

(Քաղվածք)

**«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք  
(Ընդունված է 2005 թվականի հուլիսի 8-ին)**

### **Հոդված 21. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի ուսանողները և ունկնդիրները**

1. **Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողն իրավունք ունի՝**

1) ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր (էլեկտիվ) և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) դասընթացներ, որոնք տրամադրում են ուսումնական հաստատությունները.

2) մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները.

3) մասնակցելու արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման համապատասխան մարմինների աշխատանքներին.

4) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, անցնելու ուսումնական այլ դասընթաց՝ հաստատության սահմանած կարգով.

7) օգտվելու սահմանված չափի՝ ներառյալ անվանական, ինչպես նաև իրենց ուսման ուղարկած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց նշանակած կրթաթոշակներից, նպաստներից և վարկերից, նվիրատվություններից և դրամաշնորհներից.

9) ուսանողները կարող են օգտվել օրենքներով և տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

2. Առողջական պատճառներով կամ այլ բացառիկ դեպքերում ուսանողին կարող է տրամադրվել ակադեմիական արձակուրդ, որի ընթացքում նա պահպանում է ուսանողի իր իրավունքը: Ակադեմիական արձակուրդ տրամադրելու կարգը և ժամկետները սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3. Ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած անձի ուսանողական իրավունքը կարող է վերականգնվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

4. Ուսանողի տեղափոխությունը պետական հավատարմագրում ստացած մասնագիտական ուսումնական հաստատություն կարող է իրականացվել մեկ այլ պետական հավատարմագրում ստացած մասնագիտական ուսումնական հաստատությունից:

5. Ունկնդիրները մասնագիտական կրթական ծառայություններ ստանալու մասով օգտվում են ուսանողների իրավունքից:

(Քաղվածք)

**ՀՀ կառավարության որոշում «ՀՀ ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու եվ «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին (Ընդունված է 9 նոյեմբերի 2006 թվականի N 1791-Ն)**

43. Կրթահամալիրի սովորողներն իրավունք ունեն՝

ա) օգտվելու մասնագիտացված լսարաններից, գրադարանից և Կրթահամալիրի մարզական, առողջարարական, մշակութային ու հանրակացարանային համալիրից.

բ) օգտվելու ոստիկանության ծառայողների համար «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավունքներից.

գ) մասնակցելու Կրթահամալիրի գործունեությանն առնչվող հարցերի քննարկմանը և ներկայացնելու առաջարկություններ.

դ) ըստ նախասիրությունների՝ մասնակցելու Կրթահամալիրում անցկացվող ուսանողական գիտական հետազոտություններին.

ե) օգտվելու սովորողների համար ստեղծված կենցաղի, սննդի, առողջության պահպանման, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման պայմաններից.

զ) ստեղծելու ուսանողական խորհուրդ, մասնակցելու դրա աշխատանքներին.

է) փոխադրվելու մեկ այլ բուհ (այդ թվում՝ օտարերկրյա պետությունների)՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով.

ը) վերականգնվելու Կրթահամալիրում՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

46. Կրթահամալիրն իրավունք ունի իրականացնելու միջազգային համագործակցություն հետևյալ ձևերով՝

զ) ՀՀ ոստիկանության պետի համաձայնությամբ՝ վերապատրաստման նպատակով Կրթահամալիրի աշխատողների, սովորողների, հայցորդների ու դոկտորանտների՝ օտարերկրյա ուսումնական հաստատություններ գործուղում.

## **ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(Քաղվածք)

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին»**

**ՀՀ օրենք**

**(Ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին)**

### **Հոդված 17. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողները**

5. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողը պարտավոր է կատարել բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ ներքին կարգապահության կանոններով սահմանված պարտականությունները:

6. Բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում սովորողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ բարձրագույն ուսումնական հաստատությունից հեռացնելը՝ ներքին ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

(Քաղվածք)

**«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք**

**(Ընդունված է 2002 թվականի հուլիսի 3-ին)**

### **Հոդված 40. Ուսման ծախսերի փոխհատուցումը**

1. Ոստիկանության ծառայողը և ոստիկանության ուսումնական հաստատությունում սովորողը, այդ թվում՝ ուսումնական այլ հաստատություններ գործուղվածը պարտավոր են փոխհատուցել իրենց՝ ՀՀ կամ օտարերկրյա պետության համապատասխան ուսումնական հաստատություններում ուսման, վերապատրաստման համար պետության կող-

մից կատարված ծախսերը, եթե նա՝

1) առանց հարգելի պատճառների դադարեցրել է ուսումը կամ վերապատրաստումը.

2) մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պատճառով ազատվել է ոստիկանությունում ծառայությունից.

3) կարգապահական խախտում կատարելու համար ազատվել է ոստիկանությունում ծառայությունից.

4) անձնական նախաձեռնությամբ ազատվել է ոստիկանությունում ծառայությունից:

2.Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում ոստիկանության ծառայողը չի հատուցում ուսման կամ վերապատրաստման համար պետության կատարած ծախսերը, եթե նա՝

1) ոստիկանության ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո ոստիկանությունում ծառայել է ոչ պակաս, քան հինգ տարի, կամ նախնական մասնագիտական կրթություն ստանալուց կամ վերապատրաստումն անցնելուց հետո՝ ոչ պակաս, քան երկու տարի.

2) ծառայությունից ազատվել է սույն օրենքի 46-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով սահմանված դեպքում, հիվանդության պատճառով կամ անձնական նախաձեռնությամբ՝ պայմանավորված ընտանիքի հաշմանդամ անդամի խնամքով:

3. Ուսման կամ վերապատրաստման համար պետության կատարած ծախսերի փոխհատուցման կարգը սահմանում է Կառավարությունը:

(Քաղվածք)

**«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք  
(Ընդունված է 2005 թվականի հուլիսի 8-ին)**

**• Հոդված 21. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի ուսանողները և ունկնդիրները**

6. Ուսանողը կամ ունկնդիրը կրում է պարտականություններ «Կրթության մասին» ՀՀ օրենքով, սույն օրենքով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ներքին կանոնակարգերով սահմանված կարգով:

(Քաղվածք)

**ՀՀ կառավարության որոշում «ՀՀ ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին  
(Ընդունված է 9 նոյեմբերի 2006 թվականի N 1791-Ն)**

44. Կրթահամալիրի սովորողները պարտավոր են՝

ա) հաճախել Կրթահամալիրում անցկացվող ուսումնական պարապմունքներին.

բ) անվերապահորեն պահպանել կարգապահությունը, սահմանված ժամկետում կատարել ուսումնական ծրագրերով և պլաններով նախատեսված ուսումնական առա-

ջադրանքները.

գ) կատարել սույն կանոնադրության պահանջները և ղեկավարների հրամանները.

դ) տիրապետել ընտրած մասնագիտության տեսական գիտելիքներին և գործնական հմտություններին:

45. Պետական պատվերի շրջանակներում կրթություն ստացող սովորողները Կրթահամալիրն ավարտելուց հետո համարվում են ատեստավորված, ծառայության են նշանակվում ոստիկանության համապատասխան պաշտոններում, և նրանց շնորհվում է ոստիկանության համապատասխան կոչում:

(Քաղվածք)

## Կ Ա Ր Գ

### ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

(Հաստատված է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի  
30.10.2013թ. թիվ 21 նիստում)

5. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կրթաթոշակ նշանակվում է քոլեջի և ակադեմիայի առկա անվճար ուսուցման բակալավրիատի նախորդ ուսումնական տարվա քննաշրջաններին գերազանց գնահատականներ ստացած, ծառայողական կարգապահություն և հասարակական ակտիվություն ցուցաբերած սովորողներին:

6. Կրթաթոշակի հավակնորդ սովորողների թեկնածությունները քննարկում են ակադեմիայի խորհրդում և քոլեջի խորհրդում, որի վերաբերյալ հիմնավորված եզրակացություններ են ներկայացվում Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչությանը:

7. Կրթաթոշակի հավակնորդների ցուցակն ուսումնամեթոդական և զարգացման վարչությունը ներկայացնում է Կրթահամալիրի գիտական խորհրդի հաստատմանը: Կրթահամալիրի գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ հաստատում է այն, որի հիման վրա Կրթահամալիրի պետը տալիս է համապատասխան հրաման:

8. Կրթաթոշակի արժանացած սովորողներին տրվում է սույն կարգի հավելվածով սահմանված ձևի հավաստագիր, որն ստորագրվում է ՀՀ ոստիկանության պետի կողմից:

9. Կրթաթոշակների տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր կիսամյակի սկզբում:

10. Ուսումնական տարվա ընթացքում կարգապահական խախտման համար տույժի ենթարկված սովորողին կրթաթոշակի հատկացումը դադարեցվում է Կրթահամալիրի պետի հրամանով:

(Քաղվածք)

**ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի որոշում  
«ՀՀ ոստիկանության կրթահամալիրի առանձին կատեգորիայի սովորողների  
համար ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում  
սահմանելու մասին»**

**(ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի  
03.11. 2016 թ. թիվ 5 նիստ)**

1. Ադրբեջանի Հանրապետության հետ սահմանամերձ գյուղական համայնքներում բնակվող սովորողներին՝ 25 տոկոս,
2. Մարտական գործողությունների մասնակիցներին (ազատամարտիկներ), նրանց երեխա սովորողներին (համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում)՝ 30 տոկոս,
3. ՀՀ ոստիկանության ծառայողների երեխաներին՝ 40 տոկոս,
4. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հաստիքային աշխատող սովորողներին, նրանց երեխա սովորողներին՝ 50 տոկոս:

(Քաղվածք)

**Կ Ա Ր Գ**

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ**

(Հաստատված ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի  
26.11.2018թ. թիվ 7 նիստում)

2. Սովորողի և/կամ շրջանավարտի զեկուցագիրը (դիմումը) հիմք է համարվում գնահատման ընթացակարգի և/կամ արդյունքների բողոքարկման գործընթացի մեկնարկի համար:
3. Սովորողը կարող է գրավոր ստուգման ձևերի արդյունքները բողոքարկել Կրթահամալիրի պետին՝ արդյունքները հրապարակվելուց հետո՝ ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը, իսկ ընթացակարգի խախտման դեպքում՝ գրավոր աշխատանքի ավարտից անմիջապես հետո:
4. Բանավոր ստուգման ձևի ընթացակարգի խախտման դեպքում սովորողը բողոքարկման համար գրավոր զեկուցագիր (դիմում) է ներկայացնում Կրթահամալիրի պետին ստուգման ավարտից անմիջապես հետո:
5. Ստուգման ձևով նախատեսված համապատասխան ընթացակարգը և (կամ) արդյունքը բողոքարկելիս սովորողը հստակ նշում է բողոքի հիմքում ընկած հանգամանքները:
6. Սովորողը զեկուցագիրը (դիմումը) ներկայացնում է Կրթահամալիրի պետին՝ նշելով.
  - 1) անունը, ազգանունը, հայրանունը, կուրսը, դասակը (խումբը), ուսուցման ձևը,
  - 2) ներկայացվող պահանջը՝ զեկուցագրի (դիմումի) առարկան,



3) կարող է զեկուցագրին (դիմումին) կից ներկայացնել լրացուցիչ նյութեր,

4) զեկուցագիրը (դիմումը) գրելու ամսաթիվը, ժամը և ստորագրությունը:

7.2եկուցագիրը (դիմումը) Կրթահամալիրի պետին է ներկայացվում ուսումնական ստորաբաժանման պետի միջոցով:

8. Սույն կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետում նշված զեկուցագրի (դիմումի) առարկա կարող են հանդիսանալ հետևյալ հանգամանքները՝

1) սխալ ձևակերպված հարցերը, խնդիրները և առաջադրանքները,

2) քննող դասախոսի կամ այլ անձանց կողմից ստուգման ձևի համար սահմանված ընթացակարգի խախտումը,

3) գնահատման չափանիշների և մեթոդաբանության խախտումը,

4) այլ պատճառաբանված հանգամանքներ:

9. Բողոքարկման զեկուցագրի (դիմումի) քննարկումն ու համապատասխան որոշման ընդունումն իրականացվում է բողոքարկման հանձնաժողովի կողմից:

11. Համապատասխան ստուգման ձևի ընթացակարգի և (կամ) արդյունքների վերանայման գործընթացն անցկացվում է բողոքարկման զեկուցագիրը (դիմումը) Կրթահամալիրի պետի կողմից մակագրվելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

13. Ստուգման ձևի ընթացակարգի և (կամ) արդյունքների վերանայման տեղի և ժամանակի մասին բողոքարկման համար զեկուցագիր (դիմում) ներկայացրած սովորողը հանձնաժողովի քարտուղարի կողմից տեղեկացվում է ստուգման ձևի արդյունքների վերանայման օրվանից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը իրավասու է հանձնաժողովի նիստերին հրավիրելու նաև այլ անձանց:

14. Բողոքարկողի (դիմողի) խնդրանքով բողոքարկման զեկուցագիրը (դիմումը) կարող է հետ կանչվել դրա քննարկման ցանկացած փուլում՝ մինչև բողոքարկման հանձնաժողովի կողմից ստուգման ձևի արդյունքների քննարկման սկիզբը: Այս դեպքում զեկուցագրի կամ դիմումի քննարկումը դադարեցվում է, ինչի մասին ծանուցվում են զեկուցագրի (դիմումի) քննարկման բոլոր հնարավոր մասնակիցները:

17. Հանձնաժողովը ստուգման ձևի ընթացակարգի և (կամ) արդյունքների վերաբերյալ զեկուցագրի (դիմումի) քննարկման արդյունքներով որոշումը կայացնում է 2 աշխատանքային օրվա ընթացքում:

18. Հանձնաժողովը գրավոր ստուգման ձևի արդյունքի բողոքարկման դեպքում կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը՝

1) ստուգման արդյունքը թողնել անփոփոխ,

2) ստուգման արդյունքը բարելավել:

19. Հանձնաժողովին մակագրված զեկուցագրի (դիմումի) առարկան հանդիսացող ստուգման ձևի ընթացակարգը սովորողի բողոքարկելու դեպքում հանձնաժողովի կողմից կարող է կայացվել հետևյալ որոշումներից մեկը՝

1) ստուգման արդյունքը թողնել անփոփոխ, եթե ընթացակարգի խախտում չի արձանագրվել կամ արձանագրված խախտումը էական ազդեցություն չի ունեցել ստուգման արդյունքի վրա,

2) ստուգման ձևի կրկնակի անցկացման միջնորդությամբ դիմել Կրթահամալիրի

պետին:

Սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված որոշում կայացնելու դեպքում Կրթահամալիրի պետի հրամանով սահմանվում են կրկնակի ստուգման ձևի անցկացման օրը և անցկացնող անձը (անձինք): Ստուգման ձևի կրկնակի հանձնման ցանկացած արդյունք առ ոչինչ է դարձնում նախորդ արդյունքը:

20. Բողոքարկման արդյունքներն ամփոփվում են բողոքարկման հանձնաժողովի կողմից, ինչի մասին կազմվում է արձանագրություն:

21. Բողոքարկման զեկուցագիր (դիմում) ներկայացրած անձը բողոքարկման հանձնաժողովի որոշման վերաբերյալ տեղեկացվում է այն ընդունելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

22. Կրթահամալիրում միևնույն ստուգման արդյունքները և ընթացակարգը բողոքարկման ենթակա են մեկ անգամ:

23. Ամփոփիչ ատեստավորման գնահատականի վերաբերյալ շրջանավարտի բողոքն ընդունվում և դիտարկվում է միայն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումներ թույլ տալու դեպքում:

24. Ամփոփիչ ատեստավորման արդյունքների հրապարակումից հետո ամփոփիչ ատեստավորման առարկայական հանձնաժողովի նախագահը հարցնում է այդ պահին ամփոփիչ ատեստավորման սենյակում ներկա գտնվող շրջանավարտներին բողոքների առկայության մասին: Այդպիսի բողոքի առկայության դեպքում շրջանավարտը պետք է զեկուցագիր (դիմում) ներկայացնի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին՝ ամփոփիչ ատեստավորման գնահատման արդյունքները հրապարակելուց հետո մեկ ժամվա ընթացքում՝ զեկուցագրում (դիմումում) նշելով դրա ներկայացման ժամանակը:

Շրջանավարտն իր զեկուցագրում (դիմումում) կարող է պահանջել նաև հանձնաժողովից լրացուցիչ մեկնաբանել իր գնահատականը:

25. Ամփոփիչ ատեստավորման ընթացքում տեղի ունեցած ընթացակարգային հնարավոր խախտումների փաստը պարզելու նպատակով շրջանավարտի զեկուցագիրը (դիմումը) քննարկվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից՝ զեկուցագիրը (դիմումը) ներկայացնելուն հաջորդող երկու աշխատանքային օրերի ընթացքում: Քննարկման արդյունքներով որոշումը կայացվում է մեկ օրվա ընթացքում: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստին հրավիրվում է նաև շրջանավարտը:

26. Շրջանավարտի զեկուցագրի (դիմումի) քննարկման արդյունքում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կայացնում է որոշում՝

1) բողոքն առանց քննության թողնելու մասին, եթե ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումներ թույլ տալու փաստը հերքվել է կամ շրջանավարտի զեկուցագիրը (դիմումը) ներկայացվել է սույն Կարգով սահմանված պահանջների խախտմամբ,

2) շրջանավարտի՝ գնահատականը փոխելու կամ ուսումնական այլ խմբի հետ քննությունը վերահանձնելու խնդրանքը բավարարելու մասին, եթե ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը հայտնաբերում է ընթացակարգային խախտում կամ գնահատման միավորների ամփոփման սխալ, որոնք ազդել են գնահատականի վրա,

3) շրջանավարտի՝ գնահատականը փոխելու կամ ուսումնական այլ խմբի հետ քննությունը վերահանձնելու խնդրանքը մերժելու մասին, եթե գնահատման միավորների ամփոփման սխալը չեն ազդել գնահատման արդյունքի վրա:

(Քաղվածք)

## Կ Ա Ր Գ

### ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

(Հաստատված է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի  
14.03.2019թ. թիվ 3 նիստում)

1. Կուրսային աշխատանքը բակալավրի կրթական ծրագրի կարևոր բաղադրիչներից է: Այն ուսումնահետազոտական աշխատանք է, որի կատարումը սովորողից պահանջում է գիտելիքների որոշակի պաշար և նպաստում է նրա մասնագիտական հմտությունների ձևավորմանը:

3. Կուրսային աշխատանքի կատարման նպատակն է՝

1) սովորողների գիտելիքների և մասնագիտական կարողությունների խորացումը և կատարելագործումը,

2) սովորողների ինքնուրույն ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կատարման կարողությունների ձևավորումը,

3) ժամանակակից տեխնոլոգիաների, տեղեկատվական նյութերի մշակման, վերլուծության և կիրառման կարողությունների և հմտությունների ձևավորումը,

4) հետազոտությունների արդյունքների վերլուծության, մեկնաբանման, ստացված արդյունքների հիման վրա հետևությունների և առաջարկների ձևակերպման կարողությունների ձևավորումը:

8. Կուրսային աշխատանքի կատարման վերահսկողությունն իրականացնում է աշխատանքի ղեկավարը:

10. Ղեկավարը պարտավոր է ստուգել սովորողի ներկայացրած կուրսային աշխատանքը և ստուգման արդյունքներով աշխատանքի տիտղոսաթերթի վրա ամրագրել աշխատանքը պաշտպանության երաշխավորելու (կամ չերաշխավորելու) իր պատճառաբանված որոշումը:

13. Կուրսային աշխատանքի պաշտպանության թույլատրվում են այն սովորողները, որոնք սահմանված ժամկետում թողարկող ամբիոն են ներկայացրել սույն կանոնակարգի պահանջներին համապատասխանող աշխատանք:

14. Կուրսային աշխատանքի պաշտպանության ժամանակ սովորողին ելույթի համար տրվում է 10-15 րոպե: Սովորողի ելույթը պետք է պարունակի տեղեկություններ՝ աշխատանքի թեմայի, դրա արդիականության հիմնավորման, ստացած արդյունքների և եզրակացությունների մասին: Սովորողի ելույթից հետո նրան կարող են տրվել հարցեր կուրսային աշխատանքի թեմայի շրջանակներում:

15. Կուրսային աշխատանքը գնահատվում է 20-միավորանոց սանդղակով՝ հաշվի առնելով գնահատման միավորների հետևյալ չափաչափանիշները.

№	Չափանիշը	Առավելագույն միավորը
1	Ներկայացման որակը	6
2	Ձևակերպման որակը	6
3	Կատարման ինքնուրույնության աստիճանը	6
4	Արդիականության հիմնավորումը	2
<b>Ընդամենը՝</b>		<b>20</b>

17. Սույն կարգով սահմանված ժամկետների խախտմամբ ներկայացված, անբավարար գնահատականի արժանացած կամ չներկայացված կուրսային աշխատանքը համարվում է ակադեմիական պարտք:

18. Կուրսային աշխատանքը վերահանձնելու համար սովորողը պարտավոր է ոչ ուշ, քան վերահանձնման նշանակված օրվանից 5 աշխատանքային օր առաջ ղեկավարին ներկայացնել նույն թեմայով կուրսային աշխատանքը:

(Քաղվածք)

#### Կ Ա Ր Գ

### **ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ**

(Հաստատված է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 11.02.2015թ. թիվ 2 նիստում)

2. Դիպլոմային աշխատանքը որակավորման աշխատանք է, որը կոչված է համակարգելու և ամրապնդելու շրջանավարտների գիտելիքներն ու կարողությունները և, որպես կանոն, պետք է ունենա գործնական նշանակություն՝ լուծի մասնագիտական որոշակի խնդիր (խնդիրներ):

3. Մագիստրոսական թեզը որակավորման աշխատանք է, որը վկայում է հեղինակի անձնական ներդրման, տեսական գիտելիքների ու գործնական կարողությունների օգտագործմամբ ինքնուրույն գիտագործնական հետազոտություններ անցկացնելու ընդունակության մասին:

5. Դիպլոմային աշխատանքի թեմայի ընտրությունը կատարվում է ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետում կամ բակալավրիատում ուսուցման վերջին ուստարվա առաջին կիսամյակում՝ մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում:

6. Մագիստրոսական թեզի թեմայի ընտրությունը կատարվում է մագիստրատուրայում ուսուցման առաջին կիսամյակում՝ մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում:

7. Դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի թեմաներն ընտրվում են ակադեմիայի ամբիոններում՝ համապատասխան ամբիոնի նիստում նախօրոք քննարկված ու առաջարկվող թեմաների ցանկից:

8. Դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի թեմայի ընտրության հարցում ամբիոնի կողմից կարող են ընդունվել նաև ոստիկանական միջին մասնագիտական կրթության, բակալավրիատի սովորողների և մագիստրանտների առաջարկները, եթե դրանք հիմնավորված են, համապատասխանում են մասնագիտությանը և չեն կրկնվում:

12. Դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի կատարման համար մասնագիտական ամբիոնի կողմից նշանակվում է ղեկավար:

16. Դիպլոմային աշխատանքի ներածությունում առնվազն անհրաժեշտ է ներկայացնել հետազոտության թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական հիմքը, հետազոտության նորմատիվ հիմքը և աշխատանքի կառուցվածքը:

17. Մագիստրոսական թեզի ներածությունում անհրաժեշտ է ներկայացնել հետազոտության թեմայի արդիականությունը, թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության մեթոդաբանական հիմքը, հետազոտության տեսական հիմքը, հետազոտության փորձառնական (էմպիրիկ) հիմքը, հետազոտության նորմատիվ հիմքը և թեզի կառուցվածքը:

18. Դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի հիմնական մասը ներկայացվում է գլուխներով: Գլուխները, որպես կանոն, բաղկացած են պարագրաֆներից:

19. Դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի եզրակացությունը պետք է շարադրված լինի հակիրճ, ընդգրկի հիմնախնդրի արդի վիճակի գնահատականը և լուծման վերաբերյալ առաջարկությունները:

31. Դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությունը կատարվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի առջև: Բացի հանձնաժողովի անդամներից՝ պաշտպանությանը կարող են մասնակցել նաև գիտական ղեկավարը և գրախոսողը: Պաշտպանությունը տեղի է ունենում հրապարակային և բանավոր կարգով՝ դռնբաց նիստում:

35. Ոստիկանական միջին մասնագիտական կրթության սովորողի հեղինակած դիպլոմային աշխատանքի պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար» գնահատականներով՝ գնահատման 10-միավորանոց սանդղակով:

36. Ակադեմիայի բակալավրիատի սովորողի հեղինակած դիպլոմային աշխատանքի կամ մագիստրանտի մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար» գնահատականներով՝ գնահատման 20-միավորանոց սանդղակով:

37. Ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի սովորողի հեղինակած դիպլոմային աշխատանքի պաշտպանության գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափանիշները:

**Աղյուսակ 1**

№	Չափանիշը	Առավելագույն միավորը
1	Ներկայացման որակը	4
2	Ձևակերպման որակը և կատարման ինքնուրույնության աստիճանը	4
3	Արդիականությունը (նորույթը)	2
<b>Ընդամենը՝</b>		<b>10</b>

38. Ակադեմիայի բակալավրիատի սովորողի կողմից պատրաստած դիպլոմային աշխատանքի պաշտպանության գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափանիշները.

**Աղյուսակ 2**

№	Չափանիշը	Առավելագույն միավորը
1	Ներկայացման որակը	6
2	Ձևակերպման որակը	6
3	Կատարման ինքնուրույնության աստիճանը	6
4	Արդիականությունը (նորույթը)	2
<b>Ընդամենը՝</b>		<b>20</b>

39. Մագիստրոսական թեզի պաշտպանության գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափանիշները.

**Աղյուսակ 3**

№	Չափանիշը	Առավելագույն միավորը
1	Արդիականությունը (նորույթը)	6
2	Կատարման ինքնուրույնության աստիճանը	6
3	Ձևակերպման որակը	4
4	Ներկայացման որակը	4
<b>Ընդամենը՝</b>		<b>20</b>

42. Մագիստրոսական թեզի պաշտպանությանը չներկայացած անձը կարող է դիմել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետին՝ թույլատրելու իրեն մասնակցել մագիստրոսական թեզի պաշտպանությանը՝ զեկուցագրում (դիմումում) շարադրելով չներկայանալու հարգելի պատճառները:

43. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի կողմից մագիստրանտի խնդրանքը բավարարելու դեպքում մագիստրոսական թեզի պաշտպանությունը տեղի է ունենում նույն կուրսի մյուս խմբերի պաշտպանության ժամանակ կամ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի կողմից նշանակված օրը:

44. «Անբավարար» գնահատական ստանալը կամ պաշտպանությանը անհարգելի չներկայանալը չի զրկում անձին մագիստրոսական թեզը պաշտպանելու իրավունքից:

Մագիստրոսական թեզը չպաշտպանած անձին թույլատրվում է կրկնել մագիստրոսական թեզի պաշտպանությունը հաջորդ ուսումնական տարում:

45. Մագիստրոսական թեզի պաշտպանության վերահանձնման ցանկության դեպքում, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետին հասցեագրված զեկուցագրի (դիմումի) հիման վրա, մագիստրանտը կցվում է համապատասխան ամբիոնին և ստանում մագիստրոսական թեզի նոր թեմա, իսկ մագիստրոսական թեզի ընտրությունը, պատրաստումը և պաշտպանությունն իրականացվում է ընդհանուր կարգով:

(Քաղվածք)

## **ԿԱՆՈՆԱԿԱՐԳ** **ՑԻՏՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆԸ** **ՀԱԿԱԶԴՄԱՆ ՄԱՍԻՆ**

(Հաստատված է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի  
29.01.2019թ. թիվ 1 նիստում)

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանվում է, որ ուրիշի ստեղծագործությունից մտքեր, հատվածներ քաղելն առանց դրանց ստեղծագործական վերամշակման և առանց ձեռքբերման սկզբնաղբյուրի նշման և որպես իրենը ներկայացնելը կամ ստեղծագործությունն ամբողջությամբ իր անունով ներկայացնելը համարվում է գրագողություն:

5. Գրագողությունը բացառելու և ակադեմիական ազնվությունը պահպանելու նպատակով անհրաժեշտ է իրավաչափ կիրառել ցիտման նորմերը:

6. Գրագողություն կարող է դրսևորվել հետևյալ դեպքերում.

1) ամբողջությամբ կամ մասամբ այլ մարդկանց կողմից կազմված աշխատանքը որպես սեփականը ներկայացնելը,

2) բնօրինակի տեքստը նույնությամբ արտատպելը՝ առանց աղբյուրին համապատասխան հղում կատարելու և մեջբերումը չակերտների մեջ առնելու,

3) այլ անձի մտքերը, գաղափարները սեփական շարադրանքում ներառելը՝ առանց աղբյուրին հղում կատարելու,

4) բնօրինակի տեքստի մի քանի բառ փոփոխելը, սակայն մտքի կառուցվածքը պահպանելը կամ բնօրինակի միտքը զարգացնելը՝ առանց աղբյուրին հղում կատարելու,

5) ուրիշի մտքերի, բառերի կիրառմամբ սեփական գաղափարները ձևակերպելը՝ առանց աղբյուրին հղում կատարելու,

6) տարբեր մեջբերումներն ու ձևակերպումներն իրար կցելը՝ առանց աղբյուրին հղում կատարելու,

7) հղում կատարելն այն աղբյուրին, որն անձամբ չէք կարդացել, այլ հանդիպել եք մեկ այլ հեղինակի աշխատանքում,

8) գրականության ցուցակ կազմելը, որում ներառված են աղբյուրներ, որոնք ինքներդ չէք կարդացել և դրանց հղում չէք կատարել աշխատանքում,

9) մասամբ կամ ամբողջությամբ կրկնօրինակելը ձեր (հեղինակի) այն աշխատանքը, որն արդեն ներկայացրել էք մեկ այլ դասընթացի կամ գնահատման համար:

(Քաղվածք)

#### Կ Ա Ր Գ

### ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՈՎՈՐՈՂ» ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

(Հաստատված է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի  
13.12.2018թ. թիվ 8 նիստում)

2. «Լավագույն սովորող» մրցույթը կազմակերպվում է տարին 1 անգամ՝ հիմք ընդունելով նախորդ 2 կիսամյակների արդյունքները:

3. «Լավագույն սովորող» մրցույթի նպատակն է խրախուսել Կրթահամալիրում սովորողների առաջադիմությունը, հետազոտական և հասարակական ակտիվությունը, կարգապահությունը: Մրցույթի արդյունքներն ամփոփվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին՝ սեպտեմբերի վերջին տասնօրյակում:

4. «Լավագույն սովորող» մրցույթն անցկացվում է Կրթահամալիրի ակադեմիայի և քոլեջի սովորողների համար: Ակադեմիայից լավագույն սովորող է ընտրվում վճարովի և անվճար ուսուցմամբ սովորողներից մեկական սովորող: Քոլեջից լավագույն սովորող է ընտրվում սույն կարգի պահանջներին համապատասխան:

13. «Լավագույն սովորող» մրցույթի թեկնածուները հաստատվում են համապատասխան ֆակուլտետի խորհրդի նիստով:

14. Թեկնածուի ներկայացման վերաբերյալ հայտն ստանալուց ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում ֆակուլտետի խորհուրդը «Լավագույն սովորող» մրցույթի հանձնաժողովին ներկայացնում է մրցույթին հավակնող թեկնածուների ցանկը, որոնք առնվազն նախորդ 2 կիսամյակներում հանդիսացել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորող, նախորդ 2 կիսամյակում ցուցաբերել են գերազանց առաջադիմություն և չունեն գործող կարգապահական տույժեր: «Լավագույն սովորող» մրցույթի կազմակերպման և անցկացման նպատակով ստեղծվում է հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

17. Հանձնաժողովը «Լավագույն սովորող» մրցույթի հաղթողին ընտրում է՝ հաշվի առնելով հետևյալ չափանիշները.

- 1) ուսման առաջադիմությունը,
- 2) գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ունակությունը,
- 3) ուսանողական հասարակական ակտիվությունը,
- 4) վարքը:

18. Ներկայացված թեկնածուի ուսման առաջադիմությունը գնահատվում է 8-10 միավորով՝ հաշվի առնելով նախորդ 2 կիսամյակներում բացառապես գերազանց առաջադիմություն (ակադեմիայում՝ ՄՈԳ-ի 18, 19, 20 միավորների դեպքում՝ համապատասխանաբար 8, 9, 10 գնահատման միավոր, իսկ քոլեջում՝ թվային միջինի հաշվարկով 9, 10 արդյունարար միավորի դեպքում՝ 9-10 գնահատման միավոր) ունեցող սովորողի ՄՈԳ-ի արդյունքը:

19. Ներկայացված թեկնածուի գիտահետազոտական աշխատանքներ կատարելու



ունակությունը գնահատվում է 5, 6 և 8 միավորով.

1) 5 միավոր ստանում է այն թեկնածուն, որը մասնակցել է ներքուհական գիտաժողովներին, սեմինարներին, ֆորումներին զեկույցով և/կամ որի հոդվածը տպագրվել է տվյալ միջոցառման արդյունքներով:

2) 6 միավոր ստանում է այն թեկնածուն, որը մասնակցել է հանրապետական կամ միջբուհական գիտաժողովներին, սեմինարներին, ֆորումներին զեկույցով և ունի տվյալ թեմայով հրատարակված հոդված(ներ) համապատասխան միջոցառման կամ այլ հրատարակվող ժողովածուում (պարբերականում),

3) 7 միավոր ստանում է այն թեկնածուն, որը մասնակցել է միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների զեկույցով և/կամ որի հոդվածը տպագրվել է տվյալ միջոցառման արդյունքներով,

4) 8 միավոր ստանում է այն թեկնածուն, որն ունի հրատարակված հոդված միջազգային գիտական ամսագրում կամ մրցանակային տեղ է զբաղեցրել տարատեսակ մրցույթներում, օլիմպիադաներում կամ նմանատիպ միջոցառումների ընթացքում:

20. Հետազոտական աշխատանքի առկայության դեպքում թեկնածուին տրվում է 5 միավոր, եթե այդ աշխատանքը կատարվել է նախապես հաստատված պլանով և ունեցել է համապատասխան ղեկավար:

21. Թեկնածուն ստանում է 5 միավոր, եթե նա հասարակական կարգի պահպանության ծառայության համար արժանացել է խրախուսանքի:

22. 8 միավոր ստանում է այն թեկնածուն, որն ուսման ընթացքում մասնակցել է հանցագործության բացահայտմանը կամ հետախուզվողի հայտնաբերմանը:

23. Ներկայացված թեկնածուի հասարակական ակտիվությունը գնահատվում է 1-5 միավորով: Հասարակական ակտիվության տակ անհրաժեշտ է հասկանալ սովորողի մասնակցությունը հասարակական գործունեությանը, ուսանողական տարբեր խմբակների աշխատանքներին, ինտելեկտուալ, սպորտային, մշակութային և այլ միջոցառումներին:

24. Սովորողի վարքի գնահատման չափանիշ է տույժի բացակայությունը, որը հավաստում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կադրային ստորաբաժանման կողմից տրամադրվող տեղեկանքով:

25. Միավորների հավասարության դեպքում առավելությունն ըստ հաջորդականության տրվում է Կարգի 18 և 19-րդ կետերով նախատեսված չափանիշներին:

26. «Լավագույն սովորող» մրցույթի հաղթողի վերաբերյալ Հանձնաժողովը կայացնում է որոշում, որի հիման վրա Կրթահամալիրի պետի հրամանով ճանաչվում են տվյալ տարվա քոլեջի և ակադեմիայի «Լավագույն սովորող» մրցույթի հաղթողները:

Հաղթողի անունը հրապարակվում է հանդիսավոր պայմաններում: Հաղթողը պարգևատրվում է պատվոգրով և հուշամեդալով՝ նախատեսված «Լավագույն սովորող» ամենամյա մրցույթի հաղթողների համար: Հաղթողը կարող է արժանանալ նաև այլ խրախուսանքների: Հաղթողները ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով ընդգրկվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի կազմում:

27. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները կարող են բողոքարկվել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետին՝ գրավոր զեկույցագրի (դիմումի) հիման վրա, վերջնական որոշումը հրապարակելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ինչու՞ սովորել ՀՀ ոստիկանության կրթահամալիրում.

- Կրթահամալիրը ՀՀ-ում **միակ ոստիկանական** ռազմական ուսումնական հաստատությունն է:
- Կրթահամալիրում սովորողներն ստանում են ժամանակակից գիտական մտքի զարգացմանն ու գործունեության արդյունավետ կազմակերպման սկզբունքներին համահունչ **առաջնակարգ իրավաբանական կրթություն:**
- **Պեպրական պատվերի շրջանակներում անվճար ուսումնառություն:** Ուսումնառության ընթացքում սովորողները հանդիսանում են ոստիկանության ծառայող, ուսումնառության տարիները համարվում են ծառայության ստաժ, ուսման ողջ ժամանակահատվածում ստանում են վարձատրություն՝ նվազագույն ամսական աշխատավարձի չափով, իսկ գերազանց առաջադիմություն և ծառայողական կարգապահություն ցուցաբերելու դեպքում նաև անվանական կրթաթոշակ: Օգտվում են անվճար բուժօգնության և ոստիկանության ծառայողին հատկացված այլ սոցիալական երաշխիքներից, արտոնություններից:
- Ուսումն ավարտելուց անմիջապես հետո շրջանավարտին շնորհվում է **սպայական կոչում:**
- Սովորողն ունի **երաշխավորված արժանապատիվ աշխատանք:**
- Կրթության ընթացքում սովորողները բացի զուտ տեսական իրավաբանական գիտելիքներից հմտություններ են ձեռք բերում նաև **հրաձգությունից** (անընդհատ պրակտիկ պարապմունքներ հրաձգարաններում՝ տարբեր զինատեսակների միջոցով), **փեղագրությունից, հատուկ փակփիկական պատրաստականությունից, սամբոյի, հարձակողական և պաշտպանական մարտարվեստի** բազմազան ձևերից:
- **Ուսումնառության առաջին կուրսից կազմակերպվում են պրակտիկաներ** ոստիկանական ամենատարբեր ստորաբաժանումներում և իրավապահ այլ մարմիններում:
- ՀՀ-ում **միակ բուհը**, որտեղ ամբողջ ծավալով (գաղտնի ինստիտուտներով հանդերձ) դասավանդվում է **օպերատիվ հետախուզական գործունեություն առարկան**, որը հնարավորություն է տալիս յուրացնել օպերատիվ աշխատանքի բոլոր նրբությունները, ստանալ մյուսներից տարբերվող կարևոր գիտելիքներ:
- Կրթահամալիրի **շրջանավարտներ** են ոստիկանության բարձրաստիճան գրեթե բոլոր պաշտոնյաները, անվանի պրոֆեսիոնալները:
- **Կրթահամալիրն իր սովորողներին տրամադրում է անվճար** հանրակացարան և ավտոկայանատեղի:
- Սովորողները ներգրավված են տարատեսակ գիտական, մշակութային, ինտելլեկտուալ և սպորտային խմբակներում, գործում են **անվճար անզլերենի, պարսկերենի, ֆրանսերենի** ակումբներ:
- Կրթահամալիրն ունի հրաշալի բուսականությամբ, բարեկարգվածությամբ, տեսարժան վայրերով աչքի ընկնող տարածք:
- ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԸ ԽԻՋԱԽՆԵՐԻ ԿՐԹՕՋԱԽ Է: